

891.71.09

76-92



ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ
ԿՅԱՆՔԸ

Լ. ՈՒՏԵՎՍԿԻ

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ ԿՅԱՆՔԸ

ՊԵՏԶՐԱՑ

891.71.09
ՈՒ-92



ՆՃԱՆԱԿՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

ՅԵՐԿՐՈՐԻ ԳԻՐՔ

Ի.Ս. ՏՈՒՐԳԵՆՆԵՎ

1818 - 1883



ՅԵՐԵՎԱՆ-1937

81/19 NOV 2010

Լ.ՈՒՏԵՎՍԿԻ

891.71.09

ՈՒ-92

կր.

ՏՈՒՐԳԵՆՆԵՎԻ
ԿՅԱՆՔԸ



ՊԵՏԷՐՍ
ՀԼԿՅԵՄԿԿԿԻՑ ՄԱՆԿՊԱՏ ԳՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

14935

Թարգմանիչ՝ Հմ. Տարախչյան
Խմբագիր՝ Ռուբ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա. Գասպարյան



628
38

ՄԱՍԿ ԱՌԱՋԻՆ

ԿԱԼՎԱԾԱՏԻՐՈՒՀՈՒ ԱՌԱՎՈՏԸ

«Յես գարթնում էմ ժամը 8-ին, զանգահարում եմ: Աչքերս տրորում եմ ոռմախառն թեյով, հագնում չճմլված գլխադիրս, բաճկոնակս և վերցնում եմ աղոթագիրքը... Յեվ թեյը պատրաստ ե, ննջարանում լցնում ե Դունյաշկան. սաղմոսագիրքը թողնում եմ մի կողմ—խմում եմ առաջին գավաթը: Մինչև յերկրորդը՝ միշտ առնում եմ խաղաքարտերն ու գուշակում, և չեթե բացվում ե սևի աղջիկը,—աստված ազատի, մանավանդ յեթե սրտի վրա չե ընկնում: Բերում եմ մյուս գավաթը. յես հագնում եմ կոշիկներս, հագնում եմ անավտովա զգեստս, աղոթում եմ աստծուն և զնում... Թռչուններն արդեն ինձ են սպասում, ճղճղում են... Առավոտն սկսվում ե... (Հետո) հայրական կաբինետում, վոր բարինի չե կոչվում: Ի՞նչ եյի անում:—Մտա, զանգահարեցի: Մտավ հերթապահ տղան, կարմիր ժապավենը մերակում... —«Ավագ սպասավորին»:—Մտավ ավագ սպասավորը և խոհարարը պարենը ձեռքին: Տավարի միս բուլլոնի համար և այլն... Առհարարին հանդիմանեցի...

Սրանք դուրս գացին... Աշխատանքներ... Պարտիզ-
պանները վառարաններն ելին վառում, ջրում ելին
ծաղիկները... Հյուսնը սեղանն եր մաքրում, աղջիկ-
ներն այս... և այն: Ահա և ժամի տասնմեկն անց է
կես... Այնինչ աղափնները՝ թը՛խկ-թը՛խկ, թակում
են պատուհանը... դո՛ւ... դո՛ւ... դունդունում են...
դունդունում... Յեզոբկան, նոր լակեյը, կախպոռը,
բերում է կերն ու տոպրակը. աղափնները թռչում են
նրա վրա և, վերջապես, մուտքի սանդուխքի վրա,
պատշգամբում կռվում են, բարկանում, վիճում, իսկ
գանգը խփում է ժամի 12-ը...»:

Այսպես եր սկսվում Վարվառա Պետրոֆևա Տուր-
գենևաչի առավոտը Սպասկոյե-Լուտովինովո գյուղի
տերունական տանը: Սպասկոյե գյուղի հսկայական
տունը, վոր ունի քառասուն սենյակ, յերկուսոս դահ-
լիձ, անծայր միջանցքներ, գաղտնի սանդուխքներ և
մութ ծակուծուկեր, կառուցված էր կիսաշրջանաձև:
Նրանից վոչ հեռու գտնվում էին մառանները, նը-
կուղները, սառցարանները, իսկ ավելի հեռու՝ բազ-
մաթիվ «սպասավորների» բնակարանները: Վիթխա-
րի լորենիների լայն և չերկար ծառուղիները տանից
տանում էլին դեպի խիտ ու մութ ճանապարհներով
հսկայական հին պարտեզը, վորոնք գնում էին աս-
տիճանաձև և վերջանում հոսող լճակով: Իսկ դաստա-
կերտի շուրջն աճում էլին հոյակապ դարավոր ան-
տառներ, վորոնց մեջ վորսորդի համար պատրաստ-
ված էր հարուստ վորս: Գալլերի, աղվեսների և նա-
պաստակների համար այնտեղ լայնարձակ է ու ազատ:
Այնտեղ բազմաթիվ թռչուններ էլին ապրում: Առա-
տորեն աճում էլին պտուղներ, կաղին, սունկեր:

Իսկ ավելի հեռուն տարածվում էլին անծայր
գաշտերը: Բլրների լանջերին և գետակների ափերին
իրենց հարդե կտուրներով տրտում ու վհատ մոխրին
էլին տալիս բազմաթիվ գյուղականեր:

Սպասկոյե-Լուտովինովոն գտնվում էր Որյոլի
հանանգում. Մցենսկի գավառում:

ՀԻՆ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

Վարվառա Պետրոֆևան ամուսնացավ, յերբ մոտ
յերեսուն տարեկան էր: Նա տգեղ էր, ցածրահասակ,
մի փոքր չեչոտ և կապած: Բայց միաժամանակ «նրա
վողջ անձնավորության մեջ,—հիշում է նրա ժամանա-
կակցուհիներից մեկը,—ինչ վոր գրավիչ բան կար»:
Այդ տգեղ աղջիկը հսկայական կարողության տեր էր:
Կատարյալ վորբ լինելով, նա իր հորեղբայր Լուտո-
վինովից ժառանգեց հինգ հազար ձորտ գյուղացիներ և
հինգ հազարներում հսկայական հողային հանդակ-
ներ:

Սերգեյ Նիկոլաևիչ Տուրգենևը նրա հետ ամուս-
նացավ հաշվից գրգված: Նա վոչ մի հարստություն
չուներ: Ամուսնությունը նրա համար միայն անհոգ
կյանք ձեռք բերելու միջոց էր: Սպասկոյեյի տան
պատերից մեկի վրա չերկար տարիներ կախված էր
նրա պատկերը. «Նա դեռ նման է 26 տարեկան պա-
տանու, գեղեցիկ է,—հիշում է մի ժամանակակից,—
և, տարրինակ է, չնայած նրա զարմանալի մուգկա-
պուլտ, համարձակ և առնական աչքերին, թվում է,
թե նա տղամարդ չէ, այլ կին կամ նույնիսկ քամե-
լիա, վոր գուզված է հեծյալ գվարդիականի սպիտակ
համազգեստով»:

Սերգեյ Նիկոլաևիչն ընտանիքով քիչ եր հետա-
քրքրվում: Նրան ավելի շատ հետաքրքրում էյին այն
վայելքները, վոր կարող եր տալ հինգ հազար ճորտ
գյուղացիների աշխատանքով ապահոված կյանքը: Հե-
տագայում Տուրգենևը նրան պատկերացրեց «Առաջին
սեր» պատմվածքում: Հերոսի հայրը, սառն ու ան-
մատչելի, վոր իրեն ընտանիքից հեռու յեր պահում և
միաժամանակ լի յի ինչ վոր անվանելի թովչանքով,—
իր սեփական հայրն է, Սերգեյ Նիկոլաևիչ Տուրգենևը:

Վարվառա Պետրովնան իր ամբողջ կյանքում որա-
գիր եր պահում: Նրանք մեզ չեն հասել: Դրա փոխա-
րեն պահպանվել է նրա հուշատետրը: Այդ բավական
հին գրքուչկի եջերից մեկում կանացի խոշոր ձեռա-
գրով գրված են հետևյալ տողերը.

«Յերկուսաբքի, 1818 թվի հոկտեմբերի 28-ին ծնվեց
Իվան վորդիս, բոյը 12 վերսկ, Ուրլուում, իր քանր, առա-
վոսյան ժամը 12-ին»:

Դա Իվան Սերգեևիչ Տուրգենևն եր:

ԾԵԾԻ ՅԵՎ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՄԵՁ

Տուրգենևի մանկական տարիներն անցան Սպաս-
սկոյեյի հսկայական տանը, վորտեղ վոչ միայն յերե-
խաները, այլև հասակավորները—զանազան աստիճա-
նի սպասավորները, ձրիակցացերն ու կոմպանյոնու-
հին—բոլորը դողում էյին խիստ և արագ դատաստան
տեսնող Վարվառա Պետրովնայի առաջ:

Նա իր նախնիքների, Լուսովիցիների, դաժան
կալվածատեր—սամադուրների արժանավոր ժառան-
գուհին եր: Նրա տիրական, բռնակալ բնավորութունն
արտահայտվում եր ինչպես արտաքին աշխարհում,

այնպես ել իր սեփական ընտանիքում: Նա դաժան
ձեռքով եր կառավարում իր բազմաթիվ «հպատակնե-
րին»: Աննյան հանցանքի համար այստեղ մարդկանց
ծեծում էյին, «հերթից դուրս» գինվոր էյին ուղար-
կում և նույնիսկ աքսորում էյին Սիրիը: «Յես ծնվել
և մեծացել եմ... այնպիսի մթնոլորտում, վորտեղ իշ-
խում էյին վզակոթին տալը, կմշտուքները, ծեծն ու
ապտակը»,—հետագայում հիշում է Տուրգենևը:

Թեև փոքրիկ Վանյան Վարվառա Պետրովնայի սի-
րելին եր համարվում (ընտանիքում կային 3 յերեխա),
բայց նրան ձիպտոր շատ լավ ծանոթ եր: Դաստիարակու-
թյան ամենալավ զենքն այստեղ համարվում եր ծեծը:
«Ծեծում էյին ինձ, պատմում եր նա ծերության
հասակում,—ամեն մի դատարկ բանի համար, համար-
յա ամեն որ... Մի անգամ, արդեն պառավ մի ձրիա-
կաց, աստված գիտե, թե իմ ինչ արարքն եր նկատել,
և այդ մասին հայտնել եր մորս: Մայրս առանց վորևե
գատի, իսկույն սկսեց ծեծել ինձ,—ծեծում եր ինքն
իր սեփական ձեռքերով,—և ինչքան ել յես աղաչում
էյի ասել՝ թե ինչ բանի համար են ինձ այդպես
պատժում, ասում եր. «Ինքդ գիտես, դու ինքդ պետք
է իմանաս, ինքդ պիտի գլխի ընկնես, դու գուշա-
կիր, թե ինչո՞ւ համար եմ քեզ ծեծում»:

Հետևյալ որը, յերբ հայտնեցի, թե կատարելապես
չեմ հասկանում, թե ինձ ինչու համար էյին ծեծում,
ինձ յերկրորդ անգամ ծեծեցին և ասացին, վոր ինձ
ամեն որ կծեծեն, մինչև վոր յես չխոստովանեմ իմ
մեծ հանցագործությունը:

Վախն ինձ այնպես եր համակել, յես այնպիսի
սարսափի մեջ էյի, վոր վճռեցի գիշերը փախչել: Յես

արդեն վեր կացա, կամացուկ հագնվեցի և միջանցքով խարխափելով դուրս յեկա հաշար: Ինքս ել չգիտեմ, թե ուր եյի ուզում փախչել—միայն զգում եյի, վոր պետք է փախչել, և փախչել այնպես, վոր ինձ չգտնեն, և վոր դա յե իմ միակ փրկությունը: Ծանր շնչելով ու ցնցվելով, յես գնում եյի գողի նման: Հանկարծ միջանցքում վառած մոմ յերևաց, և յես ւարսափով տեսա, վոր մեկն ինձ է մոտենում—դա գերմանացին եր, իմ ուսուցիչը: Նա բռնեց իմ ձեռքը, շատ զարմացավ և սկսեց ինձ հարց ու փորձ անել:

— Յես ուզում եմ փախչել,—ասացի յես և արցունքները հեղեղեցին աչքերս:

— Ի՞նչպես, ո՞ւր փախչել:

— Ուր ուզում ե լինի:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ:

— Յերգվում եմ աստուծով, չգիտեմ:

— Նրա համար, վոր ինձ ձեռնում են, և յես չգիտեմ, թե ինչու համար են ձեռնում:

Այստեղ բարի ծերուկն ինձ փափայեց, գրկեց և խոսք տվեց, վոր ինձ այլևս չեն պատժի: Դրանից հետո աղային հանգիստ թողին... Հոր մոտ պաշտպանություն գտնելու մասին մտածելն անգամ ավելորդ եր: Նա յերեխաներին մորից պակաս վախ չեր ազդում:

«Մահվանից առաջ վերջին տարիները նա համարյա անշարժ պառկած եր,—հիշում ե Տուրգենևը,—իսկ մենք նրանից, այդ ուժասուշառ հիվանդից դեռ ես վախենում եյինք, ինչպես կրակից: Ամեն առավոտ և ամեն յերեկո մենք պարտավոր եյինք գալ նրա ձեռքը

և ձեռքերը, և հետո այլևս չեյինք համարձակվում մտնել նրա սենյակը: Պատահում եր, վոր յեթե մեզ սովորականից դուրս կանչում եյին հորս մոտ—մենք արդեն դողում եյինք՝ գիտեցինք, վոր դա իզուր չեք»:

Ծերության հասակում հիշելով հեռավոր մանկության տարիները, Տուրգենևն իր նամակներից մեկում գրում եր. «Յես մեծացա ձեռի և խոշտանգումների մեջ»:

Ի՞նչ է ՆՇԱՆԱԿՈՒՄ „ՖՈՒՖԼԻԳՍ.“ ԲԱՌԸ

Այդ տարիներին նրա ուրախության միակ աղբյուրը բնությունն եր: Մպասակոյեյի դաստակերտն ամեն կողմից շրջապատված եր լայնարձակ դաշտերով: Նա ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել եր իր հակաչական պարտեզը նրա ամբողջ բազմազանությամբ: Նա քաջվում եր նրա ամենաթաղուն անկյունները և ամբողջ ժամերով մնում այնտեղ: Այստեղ նրա համար ամեն ինչ թանգ եր: Ահա այն ծառը, վորի տակ նա, յերբ բոլորովին փոքրիկ յերեխա յեր, գտավ մի հսկայական սուճիկ: Ահա այն տեղը, վորտեղ նա վկա յեղավ պղնձոճի և գորտի կավին: Փոքրիկ, կանաչ մարգագետնում կողք-կողքի աճում են յերկու հրաշալի սոճիներ: Կեչու կախված ճյուղերի միջով յերևում ե լճակը, Մպասակոյեյի մեծ լճակը կամ, ավելի շուտ, լիճը, իսկ ինչքան թռչուններ կան, սոխակներ, ծիծեռնակներ, խածկտիկներ, ճնճողուկներ, ազոնիներ: Նրանց մշտական ծլվլոցին յերբեմն միախառնվում ե լորերի յերգը հացաբույսերի միջից: Նա սիրեց նաև անտառը՝ իր բազմազան բնակչությամբ: Նա այստեղ սովորեց դանազանել թռչունների ձայ-

ները և նրանց չերզով՝ իրենց թռչուններին, նրանց հնչյուններով ճանաչել փետրավորների թագավորութ-
յան ներկայացուցիչներին:

Յեւ այդ ամբողջից նա ստիպված եր կտրվել, վորպեսզի գնար առասպելաբանությունից ինչ վոր դասեր պատրաստելու: Ճորտ դայակներին և տնարուչս վերակացուններին աստիճանաբար փոխարինում էին ոտարագզի տնային դաստիարակները: Ֆրանսերեն լեզուն իշխում եր տանը: Այստեղ վոչ միայն խոսում ու մտածում էին ֆրանսերեն, այլ և աղոթում էին ֆրանսերեն: Ֆրանսիական գրականության ջերմ յերկրապագու Վարվառա Պետրոֆուան նույնիսկ գերմանական և անգլիական հեղինակներին կարգում եր ֆրանսերեն (բայց միաժամանակ նա լավ ծանոթ եր ոռու հեղինակներին, վոչ միայն XVIII դարի գրողներին՝ Սուամրոկովին, Լոմոնոսովին և Դերժավինին, այլ և Ժուկովսկուն, Պուշկինին և Գոգոլին): Սպասկոյեյի ընդարձակ գրադարանի գրքերի յերկու յերրորդ ֆրանսերեն էին: Նույնիսկ Գյոթեյի «Յերիտասարդ Վերթերի տանջանքները» վեպը, նույնիսկ Կարամզինի «Ռուսական պետության պատմությունն» այստեղ ֆրանսերեն էին կարգում: Զարմանալի չե, վոր այստեղ վորպես ուսուցիչներ հրավիրում էին ոտարերկրացիներին: Դրանք այնպիսի տիպի ոտարերկրացիներ էին, ինչպես Տուրգենևի «Մենածուխ Ուսչանիկովը» պատմվածքի ֆրանսիացի Լեփենն է, վորը նապոլեոնյան բանակի թմրկահարներից դարձավ կալվածատերերի չերխանների դաստիարակ: Սպասկոյեյի տանը նրանք արագությամբ փոխում էին իրար: Այդ ուսուցիչներից մեկին Տուրգենևի հայրը

չերկրորդ հարկի սանդուխքից ցած նետեց. նա իր վորդիներին սենյակը մտավ այն բոպիյին, չերբ իր աշակերտներից մեկի կողմից համբերությունից յեւթ ուսուցիչը նրա մագերն եր քաշում: Մյուսը յեկավ ձեռքին մի վանդակ, վորի մեջ նստած եր ամենահասարակ, նույնիսկ չվարժեցրած ազուավ: «Մեր բոլոր բագմաթիվ սպասակազմը, — հիշում ե Տուրգենևը, — թափվեց տեսնելու տարրինակ գերմանացուն, վորն զբաղված եր իր ազուավով. սպասակազմը տարակուսանքի մեջ եր, թե գերմանացին ինչու չեր այդ ազուաֆը իր հետ բերել, յերբ այդ բարիքից մեր բակում ինչքան ասես կար: Ծեր սպասավորը, զիտելով նրա իրարանցումը, սառնարչունությամբ նկատեց. «այ դու, ֆուֆլիգ», իհարկե, այդ մակդիրն ուղղելով գերմանացուն: Դերմանացին միբավորվեց, մտածեց, իսկ հետևյալ որը նախաճաշի կամ ճաշի ժամանակ անսպասելիորեն դիմեց հորս և, ոռսերեն չափազանց վատ խոսելով, հայտնեց նրան, թե մի բան ե ուզում հարցնել:

— Թույլ տվեք ձեզանից իմանալ, թե ի՞նչ ե նշանակում ֆուֆլիգա բառը: Զեր մարդն յերեկ ինձ այդ բառով անվանեց:

Հայրս նայեց հենց այստեղ գտնված սպասավորին և ինձ ու յերդորս, գլխի ընկավ, թե բանն ինչու՞ն է, ժպտաց և ասաց.

— Դա նշանակում ե աշխույժ և սիրալիր պարոն: Ըստ յերևույթին գերմանացին այդ բացատրությանն այնքան ել չհավատաց:

— Իսկ յեթե ձեզ ասեյին, — շարունակեց նա, դիմելով հորս, — «այ դու ֆուֆլիգա» — դուք չե՞յիք վիբավորվի:

— Ընդհակառակը, յես այդ կընդունեսի վորպես կոմպլիմենտ»:

Գերմանացիին շատ զգայուն եր: Հենց վոր կսկսեր իր աշակերտներին համար կարդալ Շիլլերին, արցունքներն հեղեղի նման թափվում էին աչքերից: Շուտով իմացանք, վոր նա իր հայրենիքում յեղել է թամբա-դործ, և նրան գործից հեռացրել են:

Տուրգենևին նա առաջինը ծանոթացրեց գերմանական գրականությանը:

«ՅՈՒՐԻ ՄԻԼՈՍԼՍՎՍԿԻ»

Սպասկոյեյի կյանքը, վորի հետ կապված էին վոչ միայն առաջին դառնությունները, այլ և առաջին մտերմությունները, ընդհատվեց անսպասելիորեն արագ: Վանիչկան իննը տարեկան եր, իսկ մեծ յեղբայրը՝ Նիկոլայը, տասնութեկ տարեկան, յերբ վորոշվեց, թե արդեն ժամանակն է, վոր նրանք լրջորեն սովորել սկսեն: Ընտանիքը տեղափոխվեց Մոսկվա, իննամյա Վանյային տվին Վայդենհամմերի մասնավոր պանսիոնը: Վոյրքան նրա համար զարմանալի յեր շրջապատի փոփոխությունը: Հայրենի Սպասկոյեյի լայնարձակ տարածություններից հետո— «սպիտակափառ» Մոսկվայի նեղ և փոշոտ նրբափոփոցները, պանսիոնը՝ բծախնդիր գերմանացու գլխավորությամբ, ննջարանները, կյանքն ըստ կարգացուցցի, նոր միջավայրը, անծանոթ կարգերը:

Եյանքը պանսիոնում ընթանում եր տաղտկալի և ճիւղիւղակի: Որերը, հետո ամիսները և նույնիսկ տարիները (նա յերկու պանսիոններում մնաց մոտ յերեք տարի) անցնում էին անգուշն հաջորդականությամբ:

Այդ շրջանից միայն մի վառ և ուժեղ տպավորություն է պահպանվել նրա մոտ: Նրա պանսիոնում ապրելու վերջերին մոտ լույս տեսավ Մ. Ն. Չադուկինի «Յուրի Միլոսլավսկին»: Այդ ճոճոան, միամիտ, ազգայնական-հայրենասիրական տենդենցով համակված վեպը, սակայն, այն ժամանակ բացառիկ հաջողություն ունեցր: Պանսիոնի դաստիարակներից մեկը յերեկոներն իր սաներին անգիր պատմում եր վեպի բովանդակությունը «ծայրից-ծայր»: Տղան անսովոր հափշտակվածությամբ կլանում եր նրա պատմությունը և հետո կարող եր համարյա բառ առ բառ կրկնել այն: «Անկարելի յե պատկերացնել,—հետագայում զրում է Տուրգենևը Մ. Տ. Ակսակովին, հիշելով այդ միջադեպը,—այն կլանող և կլանված ուշադրությունը, վորով մենք բոլորս լսում էինք: Մի անգամ յես վեր թռա և հարձակվեցի ծեծելու մի տղայի, վորը պատմվածքի կիսին ուզում եր խոսել»: Վեպը նրան «կատարելության հրաշք» եր թվում: Մի փոքր ավելի ուշ նա ծանոթացավ նաև վեպի հեղինակի հետ, վորն իր հոր բարեկամն եր և յերեսնական թվականներին հաճախակի նրա մոտ եր լինում: Մեծ եր նրա հիասթափությունը, յերբ նա նրա մեջ չգտավ վոչ մի վեհ բան, վոր ազդեր յերևակայության վրա: Նա տեսավ մի կարճահասակ, հաստ, կոմիկական մարդուկ, մի փոքր կուցած, տափակ գլխով, մի տեսակ քառակուսի զեմքով, մեծ ակնոցների տակ չոված աչքերով, կարճատես և բութ հայացքով, վոր տարորինակ կերպով թափահարում եր թևերը, ոտարուտի, անձոռնի և ծիծառաշարժ մեկին:

1833 թ. աշնանը Տուրքեններ հաջողութեամբ բռնեց Մոսկվայի համալսարան մտնելու քննութիւնը և հապավ մորեգուլն ոճիքով տարազասերթուկը: Նա դարձավ «բանասիրական ֆակուլտետի» ուսանող: Նրա տասնևհինգ տարին դեռ ևս չէր լրացել:

Նրա կյանքում դա մի նշանակալից դեպք էր:

Տուրքեններ կոխում էր Մոխովոյ փողոցի հին համալսարանական շէնքի շէմքն առանց այն սրբազան սարսուռի, վորով այդ շէնքն էլին մտել նրա հասակակիցներից վումանք, որինակ՝ Գոնչարովը, վորը նրանից յերկու տարով շուտ էր վտաք դրել այդ շէնքը:

Այդ ժամանակ Մոսկվայի համալսարանն իր ուսանողներին շատ գիտելիքներ տալ չէր կարող: Աչքի ընկնող պրոֆեսորներն այնտեղ հատ ու կենտ էլին: Նրանց մեծ մասը տարեց-տարի միևնույն հնացած դասընթացն էլին կարդում: Այնուամենայնիվ այն ժամանակվա յերիտասարդների ընդհանուր զարգացման մեջ Մոսկվայի համալսարանի դերը մեծ էր: «Համալսարանական դասախոսութիւններից մենք քիչ բան քաղեցինք և շատ բան ստացանք համալսարանական կյանքից, — հիշում էր Կոնստանտին Ակսակովը, վոր այդ ժամանակ սովորում էր այդտեղ: — Հասարակական-ուսանողական կյանքը և ընդհանուր զրույցը, վոր ամեն ոք վերսկսվում էր, շատ էլին առաջ տանում առողջ յերիտասարդութեանը»: «Իսասախոսութիւններից և պրոֆեսորներից ավելի լսարանն ուսանողներին զարգացնում էր պատանի ընդհարումով, մըտքերի փոխանակութեամբ, ընթերցանութեամբ...» — հի-

շում է Մոսկվայի համալսարանի մասին մի ուրիշ նշանավոր ուսու մարդ՝ Գերցենը:

Առաջին կուրսում ավանդովոզ գիտութիւնները, — վոր այստեղ գիմնադրական կուրսը կրկնելու նման մի բան էր, — Տուրքեններն գրավել չէին կարող: Բայց նա հեռու մնաց նաև այն փիլիսոփայական և զրուական խմբակներից, վորոնք ընտրոջ են յերեսունական թվականների Մոսկվայի համար: Հավանորեն, բարձր կուրսեր փոխադրվելուց հետո զրուութեանը կիսովքեր, բայց 1834 թ. ամառը Տուրքեններ տեղափոխվեց Պետերբուրգ: Իվան Սերգեևիչը մտավ Պետերբուրգի համալսարանի յերկրորդ կուրսը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒԹ

828
83
629

Տուրքենների յերիտասարդութիւնը կապված է Պետերբուրգի հետ, ինչպես վոր նրա մանկութեանը՝ Մպասակոյեյի լայնարձակ տարածութիւնների հետ, ինչպես պատանեկութեան տարիները փոշոտ Մոսկվայի հետ: 1834 թվի ամառը Պետերբուրգ յեկավ «մի տղա, համարյա մանուկ»: Չորս տարի հետո, թողնելով այդ քաղաքը, փիլիսոփայութեան թեկնածու Իվան Տուրքեններ սկսում էր հասակավոր մարդու «թափառումների տարիները»:

Այստեղ նա զգաց առաջին վիշտը: 1834 թ. հոկտեմբերին մեռավ նրա հայրը:

Նրանց մեջ յերբեք մտերմութիւն չէր յեղել, բայց տղան իր հորը սիրում էր և նրա հանդեպ հարգանքի զգացում էր տածում: Այդ վերաբերմունքը դեպի հայրը լավ պատկերացված է «Առաջին սեր» պատմվածքում:

Պետերբուրգի համալսարանն ամեն բանով հետ

եր մնում Մոսկվայի համալսարանից: Ուսանողներն այստեղ աչքի ելին ընկնում չափազանց ցածր ընդհանուր զարգացմամբ: Պրոֆեսորները հաճախ իրենց դասախոսութունները կարգում ելին տպազրված դասագրքերով, պահանջելով, վոր ուսանողներն առարկան անգիր սերտեն:

Պրոֆեսորների մեջ եր Գոգոլը: «Մեռյալ հոգիների» ապագա հեղինակն այստեղ պատմութուն եր ավանդում: Յերեք դասախոսութուններից յերկուսը նա անպայման բաց եր թողնում: Ամբիոնի վրա յերեկվալով, նա չեր խոսում, այլ ինչ վոր անլսելի բան եր շնչում, ուսանողներին ցույց եր տալիս փոքրիկ քանդակահարներ, վոր Պաղեստինի տեսարաններն ելին պատկերացնում, և շարունակ շփոթվում եր: Ուսանողները համոզված ելին, վոր պրոֆեսոր Գոգոլը և գրող Գոգոլը, „Вечера на хуторе близ Дикань-ки“-ի հայտնի հեղինակը իրար հետ ընդհանուր վոչինչ չունեն:

Պատանի Տուրգենևը համակրանքով եր վերաբերվում միայն Պ. Կ. Պլեանյովին՝ ուսուցիչ գրականության պրոֆեսորին: Այդ բարեսիրտ մարդու գիտական բեռը նույնպես թեթև եր: Բայց նա աչքի յեր ընկնում «մաքուր և նուրբ ճաշակով... կարողանում եր իր ունկնդիրներին հաղորդել այն համակրանքները, վորով ինքը համակված եր», և Պուշկինի բարեկամն եր:

Այս համալսարանում Տուրգենևի առաջադիմութունը խիստ միջակ եր՝ յերկուսներ պատմութունից, չերկուսներ և յերեքներ հին լեզուներից, յերեքներ աշխարհագրութունից և վիճակագրութունից և միշտ լավ

թվանշաններ միայն «ուսուցիչ բանահյուսութունից», փրկիտովայութունից և աստվածաբանութունից:

Իսկ համալսարանական պատերից դուրս այլ եր: Հին լեզուների դասատուի հետ միասին նա կարգում եր Հորացիոսին, Տակիտոսին, Թուկիդիդեսին, Սոֆոկլեսին և ուրիշ հին կլասիկներին: Նա ազահուսթյամբ հսկայական քանակությամբ գրքեր եր կլանում: Պուշկինը, վոր այդ ժամանակ դեռ ապրում եր և ստեղծագործում, նրա և նրա հասակակիցների համար «կիսաստվածի նման մի բան եր»: Այդ հասակակիցներից մեկը հետագայում այսպես ե հիշում իր խոնարհումը Պուշկինի առաջ. «Յես այդ ժամանակ արբեցած ելի նրա պոեզիայի հմայքով. յես նրանով սընվում ելի, ինչպես մոր կաթով. նրա վոտանավորն ինձ հիացմունքի դող եր ազդում: Ինձ վերա, վորպես բարերար անձրև, թափվում ելին նրա ստեղծագործութունների աները...» — Այսպես եր գրում Գոնչարովը իր ծերության ժամանակ: Յեվ միևնույնն գգում եր պատանի Տուրգենևը:

Յերեսնական թվականները բնորոշ են ուսական ուսմանտիզմի ծաղկումով: Ազնվական ընթերցողների լայն շրջաններում այդ դպրոցի յերկերը հսկայական հաջողութուն ունեյին: Ըստ իրենց գրական մաներայի շինծու և փծուն յերկերի հեղինակ Մարլինսկու անունը Պուշկինի հետ մի շարքի ելին դնում: «Մարլինսկին... ամենասիրված գրողի համբավ եր վայելում... Կուկուլինի վրա նայում ելին հույսով և ակնածանքով... Իսկ Բենեդիկտովին անգիր ելին սերտում»:

Յեվ ընդհանուր հափշտակվածությանը հարկ տալով, պատանի Տուրգենևը «համբուրում եր Մարլինս-

կու անունը ամսագրի շապիկի վրա» և «Գրանուվսկու (Մոսկվայի համալսարանի ապագա հոշակավոր պրոֆեսորի) հետ գրկված, լալիս եր Բենեդիկտովի վոտանավորների գրքույկի վրա»:

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐ

Նոր եր Տուրգենևի տասնըոթ տարին լրացել չերը նա կարդաց ժան ժակ Ռուսսոյի «Մոստովանությունը»:

Այդ ընթերցանության արդյունքը յեղավ այն, վոր նրա մեջ ևս ցանկություն հղացավ գրելու իր սեփական խոստովանությունը:

«Յես ուզում եմ գրել բոլորն, ինչ վոր գիտեմ իմ մասին, և իմ ամբողջ կյանքը: Ինչու համար եմ չես այդ անում՝ կա յերկու պատճառ: Նախ՝ մոտերս կարդացի Les Confessions de J. J. Rousseau. Իմ մեջ միտք հղացավ գրել և իմ խոստովանությունը: Յերկրորդ՝ գրելով իմ կյանքն այժմ, յես այդ տետրակին ձեռք չեմ տա մինչև հիսուն տարեկան հասակս (յեթե այդքան ապրեմ) և այն ժամանակ, հավանորեն, ինձ հաճելի կլինի հիշել, թե յես ինչ եյի մտածում, ինչ եյի շերտազում այն ժամանակ, յերբ այս տողերը գրում եյի...»:

Ինչ մինչև այդ նա հափշտակությամբ կարդում եր Շեքսպիրին և Բայրոնին: Բայրոնի «Մանֆրեդ» վողբերգությունը գերել եր ոտմանտիկ տրամադրություններով համակված պատանուն: Նրա ազդեցության տակ նա գրեց մի չափածո ֆանտաստիկ դրա-

մա—«Ստենո» վերնագրով: Ավելի ուշ նա այդ դրամային տվեց չափազանց խիստ գնահատություն. դա մի «կատարյալ անհեթեթ գրվածք եր, վորի մեջ մանկական անճարակությամբ արտահայտվում եր բայրոնյան «Մանֆրեդի» ստրկական նմանողությունը: Այդ տարիներին Տուրգենևն սկսեց գրել վոտանավորներ:

Յերկու տարվա մեջ նա գրեց չերեք պոեմ և մոտ հարյուր մանր վոտանավորներ:

Նա դրանք վոչ վոքի չեր ցույց տալիս, նույնիսկ չեր մաքրագրում: Ասենք, ճւմ պիտի ցույց տար: Հո վարվառա Պետրովսային չեր ցույց տալու, վոր անկասկած գեպի այդ գրվածքները կվերաբերվեր թերահավատությամբ: Մեծ չեղբորը պիտի ցույց տար, հրետավորի պրապորշչիկին, վորի լեզվի ծայրին եյին միայն հրասանդներ, գորանոցներ, նժույգներ և զինվորների խոտավարժություն:

Բայց համալսարանն ավարտելուց առաջ նա «Ստենոն» ցույց տվեց Պ. Ա. Պլիտնյովին, նա բարեսրտորեն մատնանշեց դրամայի բոլոր թերությունները, «հայրաբար կշտամբելով» յերիտասարդ ուսանողին: Այնուամենայնիվ այդ որը նրա համար ուրախ որ եր: Ականջներում յերկար ժամանակ հնչում եյին բարի Պչոտր Ալեքսանդրովիչի վերջին բառերը.

— Այնուամենայնիվ ձեր մեջ ինչ վոր բան կա:

Այդ բառերը նրան այնքան քաջալերեցին, վոր նա Պլիտնյովի մոտ տարավ մի քանի վոտանավորներ: Նրանցից յերկուսը նա տպագրեց «Современник»

ժուռնալում: Առաջինը («Յերեկո») սկսվում էր հե-
տևյալ սողերով.

В отлогих берегах реки дремали волны;
Прощальный блеск зари на небе догорал...

(Գետի զառիթափ օփերին նիրհում էյին ալիք-
ները.

Վերջալուսի հրաժեշտի շողը հանգչում էր յեր-
կնքում...)

Դրանք Տուրգենևի առաջին գրվածքներն էյին,
վոր յերևացին մամուլում:

Մ.Ս.Ն ՅԵՐԵԿՈՐ

Հ Ր Դ Ե Հ

1838 թ. մայիսին «Նիկոլայ I» շոգենավի ճամ-
բորդների մեջ, վոր իր սովորական ռեյսն էր կատա-
րում Պետերբուրգից դեպի գերմանական Լյուբեկ քա-
ղաքը, գտնվում էր բարձրահասակ, վայելչակազմ,
լայնաթիկունք մի պատանի: Նա շրջապատի ուշա-
դրությունն էր գրավում: Գրավում էր վոչ մեծ, մի
քիչ տկարատես, յերկնագույն և բարի աչքերի մեղմ,
յերազկոտ արտահայտությունը: Անախորժ կերպով
ապշեցնում էր ձայնը, սուր բարձր կերկերոզ, նման
կանացի ձայնի, վոր տարորինակ կերպով չեր ներ-
դաշնակվում նրա մասսիվ կերպարանքին: Մուգ խար-
տյաշ մազերը շարունակ թափվում էյին ձակատին:
Սովոր շարժումով նա ուղղում էր մազերի կամակոր
փունջը:

Դա Տուրգենևն էր:

Նրա ճամպուրակի մեջն էր Պետերբուրգի համալ-
սարանի փիլիսոփայության թեկնածուի աստիճանի
դիպլոմը, վոր դրանից մի փոքր առաջ էր ստացել:
Այնինչ նա գնում էր արտասահման ճուտումը լրաց-

ներում»։ Նա համոզված էր, վոր իսկական գիտություն աղբյուրը գտնվում է արտասահմանում, աչնտեղ, ուր այժմ նրան տանում էր «Նիկոլայ I»-ը, Շելլինգ և Հեգել փիլիսոփաների հայրենիքը։ Տանը չկար մի աչնպիսի բան, վոր նրան յետ պահեր։ Նիկոլայան Ռուսաստանի մուայլ իրականությունը նրա մեջ զայրուելթ էր առաջացնում։ Նա չէր ուզում գնալ ընդհանուր հունով, արորված ճանապարհով։ Վնչ, նա մտադիր էր գլխիվայր նետվել «գերմանական ծովը»...

Յեվ ահա, մեկնելու նրա վաղուցվա յերազն իրականացավ։ Բերլին, համալսարան, պարապմունքներն հետաձգվում են մինչև աշուն, իսկ այժմ նրան սպասում է ճանապարհորդությունը, — Հոննոս, Շվեյցարիա և Հարավ... Իսկ վոր գլխավորն է՝ ազատություն...

Այդ բոլորից նրա գլուխը մի փոքր պտավում էր։ Մեկնելը հեշտ չէր։ Վարվառա Պետրոֆլան նրան բաց թողնել չէր ուզում։ Իժվարությունը նա առավ նրա համաձայնությունը։ Բայց նա մեռակ չէր գնում։ Վարվառա Պետրոֆլան նրա հետ ուղարկեց ճորտ գաստիարակին։ Դա Պորֆիրն էր, նրա ճորտ բուժակը։ Նա Տուրգենևին մոտ էր մանկությունից, բայց ճանապարհորդության մեջ նա բեռն էր։

Շոգենավում Տուրգենևի համար ժամերն արագ էյին թռչում։ Նրան զբաղեցնում էր աչն ամենը, ինչ նա տեսնում էր իր շուրջը։ Նա կլանված էր նոր տպավորություններով։ Նրա առաջ ծոֆլ էր, վորը մինչ այդ նա չէր տեսել։

Նավարկության յերրորդ որվա վերջին նավը համեմատաբար ափից հեռու չէր գտնվում։ Իրչերը նա պետք է ժամաներ Լյուբեկ։ Յերեկոյան իվան Սեր-

գեևիչը հուզվում էր։ Նա մեկ տախտակամածն էր դուրս գալիս, մեկ վերադառնում կայուտան, վերջապես մտավ ճաշարահը, վորտեղ ամեն ոք թղթախաղ էր լինում։ Յերկու սեղանների վրա բանկ էյին նետում։ Հնչում էր վոսկին։ Իր համար անսպասելի նա սեղան նստեց և վերցրեց խաղաթղթերը, այդպիսով խախտելով մեկնելուց առաջ Վարվառա Պետրոֆլային տված խոստումը. յերբեք խաղաթղթերին ձեռք չտալու մասին։

Բախտը նրան իսկույն ժպտաց։ Նա խփում էր բոլոր քարտերը։ Նրա մոտ դարսված վոսկու փալլուն կույտերն աճում էլին։ Նա արդեն սկսեց մտածել, վոր իր համար հարստություն կդիլի, յերը հանկարծ սրընթաց ներս ընկավ մի աիկին և խելագար ձայնով կանչելով. «Հրդեհ», ուշադնաց ընկավ բազմոցի վրա։

Մոռանալով փողերը, դեն շարտելով խաղաթղթերը, խաղացողները վեր ցատկեցին սեղանից և, ուշ չդարձնելով ուշաթափ աիկնոջ վրա, սայթաքելով ու իրար հրմշտելով, նետվեցին դեպի դռները։ Վոսկին սահում և ընկնում էր սեղանից վայր, թղթադրամները թափված էյին հատակին, աթոռները շուռ յեկան—վոչ վոք դրա վրա ուշադրություն չդարձրեց։ Դահլիճում արդեն ծխի հոտն զգացվում էր, և միայն խաղով տարված վոչ վոք այդ չէր նկատել։

Իրչերվա ժամը տասներկուսն էր։ Մինչև ափը մնում էր մեկ մղոն։ Նավը քնած էր։ Արթուն էյին միայն խաղամոլները դահլիճում։ Հանկարծակի տագնապն արթնացրեց բոլորին։ Ծամբորդները նետվեցին դեպի տախտակամած։ Շատերը դուրս թռան համարյա մերկ։

Ծիւի յերկու հսկայական սյուն, իր միջից դուրս
թռչող կայծերով, բարձրանում էյին խողովակի յեր-
կու կողմերից: Բոցը դուրս եր նետվում զանազան
տեղերից, կրակե սյուներով ձեղքելով խավարը: Նավի
կուրսը կտրուկ փոխեցին՝ ուղղելով այն դեպի ափ:
Ջեռքի խողովակներով կրակի վրա ջուր էյին լցնում:
Սակայն, ջրի բարակ հոսանքներն անդոր էյին փո-
թորկվող կրակի դեմ: Բոցը հաղթում էր: Հրդեհով
բռնված տարածությունը մեծանում էր: Մարդիկ փր-
կություն վորոնելով, տախտակամածով վազում էյին
դեռ ու դեն: Խուճապով բռնված նրանք իրենց արարք-
ներին հաշիվ չէյին տալիս:

Խաղասեղանից դուրս թռչելով, Տուրգենևը վախե-
ցած հետևեց մյուսներին: Անցնելով ծխով լի սան-
դուխքը, նա սրընթաց դուրս թռավ տախտակամած:
Այստեղ ծուխը, բոցը, իրարանցումը և շվարածու-
թյունը, աղաղակներն ու ճիչերը, անկարգ դեռ ու
դեն ընկնող ամբոխը խորապես ցնցեցին նրան: Այն
միտքը, թե իրեն մահացու վտանգ է սպառնում, վոր
մահը մոտ է, նրան շանթահար եր արել: Նա դողդո-
ղում էր ինչպես ցրտահար: Պետք էր մի բան անել,
փրկություն վորոնել իսկույն և չեթ, առանց հապա-
ղելու: Նա մարդկանց հրելով, վազեց տախտակամա-
ծով, առանց իրեն հաշիվ տալու, թե ինչու: Հասնե-
լով նավախեղին, նա չգիտես ինչու վճռեց, վոր ան-
հրաժեշտ է իսկույն վերադառնալ և, դժվարությամբ
իր համար ճանապարհ բանալով, վազեց յետ: Նա
ուզում էր գանգատվել, ասել այն, ինչ վոր կուտակ-
վել էր սրտում: Տեսնելով մի ծանոթ ճամբորդի, նա
մարդկանց միջով մոտեցավ նրան և հուսահատ ձայ-

նով գոռաց. «Mourir si jeune!»¹, բայց ել չշարունա-
կեց: Նրա միտքն աշխատում էր մի ուղղությամբ, նա
հիշեց, վոր կանգ առնելու ժամանակ չունի, վոր նրան
անհրաժեշտ է, թե ինչու ինքն ել չգիտեր, առաջ
շարժվել: Նրա վրա ուշադրություն դարձրին: Մի քանի
շատերը նրան ճանաչեցին: Մի տեղ, վորտեղ իրա-
րանցումն առանձնապես մեծ էր, ստիպված յեղավ
կանգ առնել: Հանկարծ բոցի բարձր նետված սյունը
նրան կատարյալ հուսահատության մատնեց: Հիմա
նրան թվում էր, վոր փրկության վոչ մի հույս
այլևս չկա:

Այդ բոպեյին նա տեսավ իր մոտով անցնող նա-
վաստուն: Լապտերի լույսն ընկավ նավաստու վրա, և
Իվան Սերգեևիչը տեսավ նրա յեռանդուն անխոռվ
դեմքը: Այդ մարդու հանգստության և իր սեփական
հոգու խռովության, չորս կողմը տիրող իրարանցման
միջև այդ խիստ կոնտրաստը նրան ապշեցրեց: Միտք
ծագեց, թե այդ մարդը կարող է իրեն փրկել: Առանց
մտածելու նա նետվեց նավաստու յետևից: Բռնելով
նրա թևը, շրջապատողների վրա ուշադրություն չդար-
ձրնելով, — նրան թվում էր, թե հիմա նրա բախտը
կվորոշվի, — նա ասաց շնչակտուր, հուզմունքից ընդ-
հատվող ձայնով.

— Տասը հազար... տասը հազար ուրբի... մայ-
րիկս ձեզ կվճարի, չեթե ինձ փրկեք:

Նավաստին նրա խոսքերի վրա վոչ մի ուշադրու-
թյուն չդարձրեց: Չպատասխանելով նրան, նավաստին

¹ Մեռնել այսպես յերիտասարդ:

ազատեց իր թևը և անհետացավ, թողնելով նրան կատարյալ շվարած դրուժյան մեջ:

Հուշար խորտակվեց: Նա միանգամից թուլացավ: Դիմադրել այլևս չեք կարող: Նա այժմ այնպիսի վիճակի մեջ ընկավ, վորով միայն կարող եր խոնարհուլթյամբ սպասել: Հասնելով մինչև արտաքին սանդուխքները, նա նստեց վերջին աստիճաններից մեկի վրա: Նա կարծես դարձել եր անզգա:

Մինչ այդ բոցն ամբողջ նավը բռնել եր: Ճամբորդները խոնվել ելին նավացուկի վրա: Խուճապն աճում եր: Յերեք մարդ նետվեցին ջուրը: Նրանք բոլորը խեղդվեցին: Նավը հանկարծ կանգնեց: Նա ծանդուտի վրա յեր: Պայծառորեն բոցավառված, նա կանգնած եր ափից հաչրուր քայլի վրա:

Տուրգենևեր հանկարծ տեսավ ափի ժայռերը: Հըրդեհով լուսավորված՝ նրանք պարզ յերևում ելին: Դա ցամաքն եր... Մի հսկայական ուրախություն համակեց նրան: Փրկությունը մոտ եր: Սկսեցին իջեցնել մակույկները: Ճամբորդներին տանելով, նրանք արագ վազվզում ելին վառվող նավի և ափի միջև:

Յամաք յելնելով, Տուրգենևեն իրեն մոլորված եր զգում: Յերեք որ ծովի վրա գտնվելուց հետո, նրան թվում եր, թե իր վոտների տակ գետինը տարուբերվում ե: Նա զգում եր ինչ վոր թուլություն: Նրա առաջ պարզ պատկերանում եր շոգենավի վրա ունեցած իր բոլոր ապրումները: Միայն այժմ յերևան յեկավ իր վարմունքի խղճալիության գիտակցությունը: Նա այժմ գիտակցում եր, վոր իրեն կորցրել եր և, վոր ամենից վատն եր, այդ նկատվել եր: Պորֆիրին հետևում եր նրան: Գյուղ չհասած նրանք հանդիպե-

ցին զույգ ձիեր լծած սալակով մի գյուղացու: Մի քանի բուպելից նրանք արգեն սլանում ելին Լյուբեկի ճանապարհով:

Լուսարացին նրանք մտան քաղաք: Դեռ կիսամուլթ եր:

Քաղաքը քնած եր:

Թիսկթիսկացներով դատարկ փողոցներով՝ սալակը կանգ առավ «Stadt Hamburg»¹ հյուրանոցի առաջ: Իվան Սերգեևիչը գլխապատառ ներս ընկավ տուն: Մոտեցավ հայելուն: Տուրգենևեն ապշեց: Նրան նայում եր նիհար, վտիտ, սուր գծերով, ցելսով կեղտոտված մի դեմք: Յերկար քիթ: Ներս ընկած այտեր: Բաց մազերը զգզված ելին և անկարգ: Վոտքերը՝ ցելի մի կույտ: Չորացած ցելը պատել եր շավարը ձընկներից վեր: Մահու չափ հոգնածությունից մարմինը նվում եր:

ՃԱՆՁՊԱՐՀՈՐԳՈՒԹՅՈՒՆ

«Չարագործ, դու, վորպես կառավարության կողմից ուղարկված սուրճանդակ, սլանում ես դեպի Բյուարը 2, խկ սուր ե քո Բյուար...»

Վ. Գ. ՏՈՒՐԳԵՆԵՎՍԻ ՆԱՄԱԿԻՑ

Իվան Սերգեևիչին ուղևորելուց հետո, վարվառա Պետրովան ևս հեռացավ Պետերբուրգից: Նա ուղեվորովեց Սպասուկոյե Գնում ելին ամբողջ տնով, մի քանի կառքերով: Առջևից՝ հսկայական ծածկակառքով

1 «Քաղաք Համբուրգ»:

2 Բյուս-Փրանսերեն «but» (բու) բառից-նպատակ:

ները, քան թե քո մտքերը, դու ամենից քիչ քո մասին ես գրում, և յես պատրաստ եմ քո մասին հարցնելու, թե այդ դիտելու արժանի քաղաքներում արդյոք իմ Իվանին չէ՞ս տեսել: Չե՞ս հանդիպել արդյոք վորեւ տեղ Jonatdhan¹ մի խոսքով Parlez moi plus de gens que des lieux»²:

Իսկ նա արգեն շատուում եր Շվեյցարիա... Բերն, Յուրգֆրաու, Տուռն... Լեռները, վոր նա յերբեք չէր տեսել, դարավոր ձյունով ծածկված գազաթները զարմացնում էյին նրան, տափաստանի բնակչին, վոր սովոր եր հարթ, անծայրածիր տարածություններին, կտրված գետերով և ձորակներով: Նա այստեղից ավելի հեռուն դեպի նոր քաղաքներ, նոր յերկրներ չէր ձգտում: Նա ցանկանում եր այստեղ յերկար մնալ: Նա իր համար գնեց բլուզ, պալուսակ ու գավազան և, Պորֆիրիին թողնելով վորեւ քաղաքում, վտաքով ճանաչարհվում եր լեռները: Մի քանի որ թափառելով, նա վերադառնում եր հողմած ու փոշոտված, բայց ուրախ և առույգ:

Սպասակոչեյից յեկած նամակները թվում էյին մի ուրիշ աշխարհից ստացված լուրեր. «Մենք չենք հավաքել խոտի մի յերրորդ մասն անգամ,—գրում եր Վարվառա Պետրովնան,—ամբողջը փտել եր չքաղած, հաճարն այնպես և խճճվել, վոր վախենում են՝ կարո՞ղ են հնձել, թե վոչ, ամբողջովին սեացել և, և ամբողջովին դատարկ... Աստծուն բարկացրել ենք...»

¹ Իվանին.

² Ստացեք ինձ ավելի շատ մարդկանց մասին, քան թե քաղաքների:

վսկ վորս ենք անում ավելի, քան յերբեիցե: Վարձե՞ն ենք յերկու վորորդներ, մեկը կրոմ-ից, մյուսն անցյալ տարվանն և, վորին ուզում եմ գնել քեզ համար... Նրանք վորս շատ են բերում, բայց ուսող չկա... Գո՞նապուր շատ և նիհարել, բայց հավանորեն լավ շուն կդառնա, հորը շատ և հիշեցնում: Միայն չեմ կարող փայփայել, շատ և թքոտ»:

Արթնանալով կարմիր կղմինդրով ծածկված իր փայտյա տնակում, նա ամեն առավոտ պատուհանից տեսնում եր մառախուղով պատած հսկայական ձյունապատ գազաթներ: Մոտենում եր աշունը: Շուտով պարապմունքները վերսկսվելու էյին Բերլինի համալսարանում: Վարվառա Պետրովնան այժմ բարկացած նամակներ եր գրում: Նա իր Վանիչկայից գոհ չէր: Նա փող շատ եր ծախսում: Նա նրան հանդիմանում եր շաշվելու համար: Նամակները լի են հանդիմանանքներով. «Ինչի՞ս էյին պետք լեռների, քաղաքների և այլն քո տված նկարագրությունները,—յես բոլորը տեսել եմ և կարդացել եմ քո նկարագրությունից ավելի լավերը: Դու ինձ չես գրում այն, ինչ վոր հարկավոր և. լեռների նկարագրության փոխարեն, ամեն մի ծախսածդ կոպեկի նկարագրությունը, լես maman, արել եմ այս և այս, և մինչև այսօր մնացել և իմ դրամապանակում այսքան, իսկ հետո և նորից՝ կանգ առնելով, հաշվելով և նորից նույնը. maman, հիմա մոտս այսքան փող և մնացել:—Վճչ, դու մեկնելուդ մոմենտից խենթի պես ես վարվել: Դու ինձ հուսախաբ արիք, յես, իսկապես, հիմարություն արի, վոր թույլ տվի այդքան ջահելին մեկնել արտասահման:—Յես մեղավոր եմ, վոր քեզ տվի Պոր-

Ֆիրիին, վորին դու ծառայի փոխարեն քեզ կամպա-
նյոն դարձրիր... Դու չես գնացել աշխարհ — աշխարհ
թափառելու, այլ սովորելու, ինչ... Շուայլե՛լ սովո-
րել... Ո՛ր, դրա համար Ռուսաստանից գնալու կարիք
չկար»:

Նորից յերևացին նոր քաղաքներ, նոր յերկրներ:
Ահա Մյունխենը, Բավարիայի սիրալը, մի գեղեցիկ
քաղաք իր գոթական տաճարներով և հին ուստուշա-
յով, ահա և, Բեռլինից բոլորովին մոտիկ, խաղաղ
Բրեզգենը, սաքսոնական պետութեան մայրաքաղաքը:

Վարվառա Պետրովնան ուրախ եր, վոր Վանիչ-
կան հեռացավ Շվեյցարիայից: Նա միշտ վախենում
էր, թե իր ճանապարհորդութեանների ժամանակ Վա-
նիչկան հանկարծ սարերից չգլորվի, չընկնի անդուն-
դը: Այն օրը, յերբ նրանից նամակ ստացավ Մյուն-
խենից, նա հանգիստ քնեց: Նա չեբազում տեսավ, թե
Վանիչկան վերադառնում է Ռուսաստան: Ահա նա
փոստային սալակով արագ գալիս է դարավոր ծառե-
քով ծածկված լայն ու հարթ բավարական ճանապար-
հով: Վանիչկան նիհար է ու դժգուշ: Վորքան նա
նիհարել է ոտար յերկրներում: Նրա կողքին է հաստ

Պորֆիրին: Փոստատարը յերկնագուշն կուրակայով,
փայլուն կոճակներով, յեղջերափողը լանջագոտու վը-
րա, յերկար խարազանով մտրակում է ձիերին: Ահա
նա յեղջերափողը տարավ շրթունքներին և նվագեց:
Նա արթնացավ: Լուսանում էր: Պատուհանների թան-
ձրը վարագույրների միջից սկսեց թափանցել ցերեկ-
վա լույսը: Յեղջերափողերի ձայներն իրոք լսվում են.
այդ հովիվն է Սպասկոյեյի կովերին արոտավայր
կանչում: Նրա կողքին, փոքրիկ սեղանի վրա ճարճա-

տում և թշուղմ եր գիշերային ճրագը: Դունյաշան
քարձրածայն խոնփում էր:

ԲԵՐԼԻՆ

«Ին վեցապես Բերլինում
ես, իմ Իվան...»

Վ. Պ. ՏՈՒՐԳԵՆԵՎԱՅԻ ՆԱՄԱԿՑ:

Սրանից հարուր տարի առաջ պրուսական մայ-
րաքաղաքը շատ քիչ եր նմանվում մայրաքաղաքային
կենտրոնի: Այստեղ ամեն ինչ ավելի շուտ գավառա-
կան քաղաք էր հիշեցնում: Սաղաղ բյուրգերներն
այստեղ չափած — ձեված կյանք էյին վարում: Այս քա-
ղաքում արթնանում էին առավոտյան ժամը 6-ին,
ճաշում էյին ցերեկվա ժամը 2-ին և պուկում էյին
քնելու հավերից շուտ: Յերեկոյան ժամը տասին «գա-
տարի փողոցներով թափառում էյին միայն մեկան-
խուլիկ և գարեջրով ծանրաբեռնված գիշերապահները,
և վորեւ անդուստ ու հարբած գերմանացի գալիս էր
«Տիրգարտենից» և Բրանդենբուրգյան դռների մոտ
խնամքով հանգցնում իր ծխախոտը, վորովհետև «ո-
րենքի առաջ պապանձվում էր»:

Այդ քաղաքը, վորտեղ քաղքենիներն աղոտ ու
գորշ կյանք էյին վարում, գիտական լուրջ կենտրոն
էր: Բերլինի համալսարանի ամբիոնի համար ինքը՝
Հեգելը, հռչակավոր գերմանական փիլիսոփան, թո-
ղեց Հայդելբերգի հին համալսարանը:

Յերեսնական թվականների վերջին նա այլևս
չկար: Յերեսուն և մեկ թվին նա մեռավ խուլերայից:
Հեգելականութունն այստեղ մշակում էյին նրա ա-
շակերտներն ու հետևորդները: Վորքան այս համա-

լսարանը նման չե՛ր Պետերբուրգի համալսարանին: Ամբիոնները գրավում էին պատկառելի գիտնականներ՝ համալսարանը հպարտանում եր մի շարք խոշոր անուններով: Լսարանները լեփ լեցուն էին — դասախոսութուններին գալիս էին վոչ միայն ուսանողները, այլ և կողմնակի հասարակութուն, աստիճանավորներ, սպաներ, նույնիսկ տիկիներ: Վերջապես, ունկնդիրները խանդավառ վերաբերմունք ունեցին դեպի պրոֆեսորների դասախոսութունները: Պրոֆեսորով հիացած ուսանողները գալիս, հավաքվում էին նրա պատուհանի տակ յերաժիշտներով և, ուվերտյուրայից հետո, ի պատիվ գիտության, համալսարանի և ուսուցչի՝ յերգեր էին յերգում: Պրոֆեսորը շնորհակալութուն էր հայտնում մատուցած պատվի համար:

Տուրգենևը լսում էր դասախոսութուններ լատինական հնությունների մասին պրոֆեսոր Կոնստանտին, հունական գրականության պատմությունը Բոկլից, պատմությունը պրոֆեսոր Ռանկեյից և, վերջապես, այն առարկան, վորը նրա համար մնացած բոլոր առարկաներից ամենակարևորն էր, հեգելյան փիլիսոփայությունը:

Հեգելով տարվելը բնորոշ էր յերեսնական թղվականների ուսուս առաջավոր յերիտասարդության համար: Հեգելն իշխում էր մտքերին: «Հեգելի տրամաբանության բոլոր յերեք մասերում, եստետիկայի յերկու մասերում, ենցիկլոպեդիայում և այլն չկար վոչ մի պարագրաֆ, — հիշում ե Գերցենը, — վորը մեր փիլիսոփաները չգրավեին մի քանի գիշերվա կատաղի վիճաբանություններով: Միմյանց սիրող մարդիկ բա-

ժանվում էին շաբաթներով, չհամաձայնելով գրավող վոգու բնորոշման, ընդունելով վորպես վիրավորանք կարծիքները արսուլյուս Կնիտսի և նրա իր համար կեցուքյան մասին: Բերլինում և գերմանական փիլիսոփայության մյուս նահանգական ու գավառական քաղաքներում լույս տեսող բոլոր ամենաչնչին բրոշյուրները, վորտեղ միայն հիշատակվում էր Հեգելի անունը, դուրս էին գրվում, կարդացվում էին մինչև վերջին ծակ ու ծուկը, մինչև բծերը, մինչև միքանի որում թերթիկների թափվելը»:

Հեգելյան փիլիսոփայությունն ավանդում էր յերիտասարդ պրոֆեսոր Վերդերը: Նա վոգելորությամբ մեկնաբանում էր իր ուսուցչի տրամաբանությունը, իր ճառը խճողելով Գեթթեյի «Փառուստի» յերկրորդ մասից առած ցիտատներով: Նա գիտությանը նվիրված մի գիտնական էր, բացառիկ մաքուր մարդ, բայց չերեխայի նման միամիտ: Ամբողջ աշխարհին «նա նայում էր, վորպես իր կալվածքի վրա, — ասում էր նրա աշակերտներից մեկը, — վորտեղ բարի մարդիկ նրա համար շարունակ սյուրպրիզներ էին պատրաստում»: Նրա դասախոսություններն ուսանողները հիացմունքով էին լսում: Տուրգենևի հիշողության մեջ յերկար տարիներ մնացին գիշերային սերենադները, վոր ուսանողները սարքում էին Վերդերի պատուհանների տակ, նրա ճառերը, ուսանողների արցունքներն ու աղաչանքները...

Պետերբուրգի համալսարանի թեկնածուն ուրախությամբ դարձավ Բերլինի ուսանող: Նրա որն ամբողջովին գրաված էր: Համալսարան՝ դասախոսությունների պիտք էր գնալ և՛ առավոտյան, և՛ ճաշից

հետո: Դասախոսություններէց հետո պետք էր լուրջ աշխատել: «Ձեզ տարորինակ կթվա,— գրում էր մի ուրիշ ուսւ ուսանող, Ստանկիւիչը,— վոր մենք, բերլին հասնելով, չենք ողտագործում նրա բոլոր շանձերը: Բայց վերդերն ու Ռանկեն յերկու այնպիսի գանձեր են, վորոնց վրա մենք ստիպված ենք արշուն քրտինք թափել, վորովհետև պարապել՝ չի նշանակում միայն դասախոսություններին հաճախել... մենք ստիպված ենք խորհել արամարանության վերա, կարգալ Դեկարտին, Լեյբնիցին, Ֆիխտելին և այլն:— Իսկ նոր պատմության վրա: Կարգալ ազբուրները...» Տուրգենևն ստիպված էր սերտել նաև լատիններն և հունարեն քերականությունները: Պարզվեց, վոր նա քերականությունները վատ գիտեր: Միաժամանակ նա ուզում էր գիտել Բերլինի կյանքի բոլոր խորշերը: Առավոտը՝ մտնել Կրանցլերի հրուշակարանը սուրճ խմելու և լրագիր կարդալու: Յերբեմն՝ ձիով գրոսնել Տիրդարտենով, այդ խիտ և ուղիղ ծառուղիներով գեղեցիկ պարտեզով: Յերեկոյան՝ թատրոն:

Համալսարան պետք է շտապել վաղ առավոտյան: Դասախոսություններն սկսվում էին ժամը ութին: Որն սկսվում էր «Տրամարանությամբ»: Որերն անցնում էին անսովոր արագությամբ:

Նա գլխովին սուզվեց նոր կյանքի մեջ, Մցենսկի փոստում Բերլինից նամակներն ավելի ու ավելի ուշ — ուշ էլին ստացվում: Տուն նամակ գրելու ժամանակ չկար: Նրա գնած գունավոր թղթին համարյա ձեռք չէր տված: «Յերեք շաբաթ է յես քե-

զանից նամակ չեմ ստացել, mon cher Jean¹, — գրում էր Վարվառա Պետրովնան: — Նամակներ չկան... Ձի գրել, պըծավ գնաց: Իսկ յես տանջվեցի մտածելով... Վանիչկան ճամբորդելիս ճանապարհին էլ կանոնավոր գրում էր — իսկ հիմա, ինչը կարող էր նրան հետ պահել. և Ա՛խ... ու վա՛խ... Իսկ ինձ համար հոգոցներն սպանիչ են: Յես կարգադրեցի գրել Պորֆիրին, և հիմա էլ նորից կրկնում եմ, իմ ախրական բռնակալական հրամանը:— Դու կարող ես և չգրել... Բայց, դու պետք է Պորֆիրին ասես — այս փոստին յես մայրիկին նամակ չեմ գրում:— Այն ժամանակ Պորֆիրին վերցնում է թուղթն ու գրիչը... Կարծեմ, բավականին ներողամիտ եմ: Բայց, — այն փոստը, յերբ յերկուսդ էլ բաց կթողնեք, յես Նիկոլաշկային անպայման կձաղկեմ. խղճում եմ նրան, իսկ շատ սիրուն և լավ տղա չե... Ինչ արած, խեղճ տղան պիտի քաշի... Տեսեք չստիպեք ինձ այդպիսի անարդարություն անելու...»

Բայց այդ ձմեռը Նիկոլաշկան պետք է վոր բավականին ծեծ կերած լիներ:

Իրենց ուսումը լրացնելու համար «փիլիսոփաների և բանաստեղծների» յերկիրը յեկած ուսաների մեջ յերեք հոգի էլին աչքի ընկնում և իրենց վրա դարձնում շրջապատի ուշադրությունները: Դրանք էլին Նեվերովը, Դրանովսկին և Ստանկիւիչը: Նրանք իրարից անբաժան էլին:

Դրանովսկուն Տուրգենևը ճանաչում էր դեռ ևս Պետերբուրգում: Նա բարձր կուրսում էր, յերբ Տուր-

1 Իմ թանկագին Իվան:

գեներալ առաջին տարին եր այնտեղ՝ Նրանք Պետեր-
բուրգում ուշ — ուշ էյին տեսնվում, բայց ամեն մի
տեսակցություն նրա հետ խորը տպավորություն եր
թողնում: Այժմ Տուրգենևեր հիշեց պետերբուրգյան
հանդիպումները: Մանավանդ մեկն առանձնապես մնա-
ցել եր նրա հիշողության մեջ: Դա տեղի ունեցավ
մի մութ ձմեռային յերեկո: Մի մեծ և դատարկ սեն-
յակում, խախուտ սեղանի շուրջը նստած, վորի վրա
ուտելիքի փոխարեն ջրամանով ջուր եր դրված և մի
բանկա մուրաբա, Գրանովսկին նրա համար կարգում
եր հատվածներ իր «Յառուտ» դրամայից: Այդ մար-
դուց բարում եր ինչ վոր վեհ — մաքուր բան:

Բերլինում նրանք չձտերմացան:

Դա Տուրգենևերն չեր դարմացնում: Նա իրեն
Գրանովսկու հետ բարեկամանալու արժան չեր հա-
մարում: Պետերբուրգի համայնարանի այդ թեկնա-
ծուի և Բերլինի ուսանողի մեջ նախկին վանիչկայից
դեռ ևս շատ բան եր մնացել, վորին իր ազմկալից
զվարճությունների համար վարվառա Պետրովնան
խիստ պատժում եր:

Գրանովսկուն Ստանկևիչի հետ կապում եր ջերմ
բարեկամությունը: Ստանկևիչն ավարտում եր Մոս-
կվայի համալսարանը, յերբ Տուրգենևեն առաջին կուր-
սուսն եր: Նրանք այն ժամանակ հազիվ ծանոթ էյին:
Նա այն հազվագյուտ մարդկանցից եր, վորոնք շըր-
ջապատողների վրա ազնվացնող և վսեմացնող ազդե-
ցություն են թողնում: Մոսկվայում նրա շուրջը
խմբվում էյին մարդիկ, վորոնց վիճակված եր ուս
հասարակական դարգացման պատմության մեջ հսկա-
յական դեր խաղալ: Ստանկևիչի խմբակի մեջ սլա-

նում էյին՝ Բելինսկին, Բակունինը, Գրանովսկին,
Ակսակովը և Բոտկինը:

Տուրգենևեր հիացմունքով եր նաչում Ստանկևի-
չին, վորն այս ձմեռվա ընթացքում նրա վրա «բա-
րեհաճ ուշադրություն չեր դարձնում»: «Անկարելի ե
բառերով նկարագրել, թե նա ինչպիսի հարգանք, հա-
մարյա յերկյուղածություն եր ներշնչում դեպի իրեն»: Նրա ներկայությամբ նա «իր սեփական անարժա-
նության և կեղծության ներքին գիտակցությունից»
ինչ վոր յերկյուղ եր զգում:

Նեվերովը, Գրանովսկին և Ստանկևիչը յերեկո-
ները հաճախ անց էյին կացնում Ֆրոլովների ուսու-
կան ընտանիքում: Յերբեմն այստեղ լինում եր նաև
Տուրգենևեր: Այս տանը հաճախակի հյուր էյին լինում
Բերլինի ինտելիգենցիայի նշանավոր ներկայացուցիչ-
ները: Այստեղ լինում էյին վերդերն ու վարնգազեն
Փոն-Ենգեն՝ քննադատ, Պուշկինի գնահատողն ու
յերկրպագուն: Տուրգենևեն այստեղ հանդիպում եր
Բետինա Փոն-Անիմին, վորը հայտնի յեր ծերու-
նի Գյոթեյի հետ ունեցած իր նամակագրությամբ:
Այստեղ լինում եր և հռչակավոր գիտնական Հում-
բոլդտը, վորն այն ժամանակ չթանասուն տարե-
կան ծերունի յեր: Նրանց բոլորին դրավում եր տան
տիրուհին: Նա մի կին եր, վոր նուրբ միտք ու յե-
րեկի կրթությունը միացնում եր սրտի պարզության
և անսովոր ջերմության, դեպի մարդիկ ունեցած ու-
շադրության և ներողամտության հետ: Նրա բարերար
ազդեցությունն զգում էյին բոլոր շըջապատողները:
Տուրգենևեն այստեղ գալիս եր «բերանը բաց լսե-
լու և լսելու համար»: Ուշ գիշերով, յերբ գերմա-
նացի հյուրերը ցրվում էյին, խոսակցությունը դառ-

նում եր ուսական ցավոտ թեմաներին: Խոսում ե-
յին ուսական կյանքի ամենածանր չարիքի՝ ճորտա-
տիրական իրավունքի մասին: Հաճախ խոսքը դա-
նում եր «ժողովրդական ներկայացուցչութան առա-
վելու թյուններին», «ամեն տեսակի պետական գործու-
նեյությանը մասնակցելու իրավունք ունենալու» մա-
սին: Տուրգենևն ազահությամբ լսում եր այդ խո-
սակցությունները: Նա զգլանք եր տածում դեպի
ճորտատիրական իրավունքը, վորի մռայլ պատկեր-
ները նա գիտել եր մանկությունից, նա դեպի այն
ատելություն եր զգում: Ռուսական ծանր իրականու-
թյունից հեռանալու համար նա «գլխիվայր նետվեց»
«գերմանական ծովը»: Բայց նա շատ չերիտասարդ
եր: Այդ ծովից կայուն, հաստատված աշխարհահայաց-
քով դուրս գալու համար հարկավոր եր անցնել հը-
զոր ներգործությունների միջով: Այն լավագույն
մարդկանց ազդեցությունը, վորոնց նա հանդիպեց,
նրա զարգացման համար վերդերի դասախոսություն-
ներից ավելի կարևոր էր: Ստանկևիչը, վոր խորասուզ-
ված եր գերմանական փիլիսոփայության մեջ նրա մշու-
շոտ վերացականություններով, միաժամանակ մտահոգ-
ված եր իր հայրենիքի ճակատագրով, վոր Նիկոլայի
թագավորության մռայլ ռեակցիայի ժամանակն եր
ապրում: Նա խոսում եր գլխավոր նպատակի՝ ժողո-
վուրդը ճորտատիրական իրավունքից ազատելու, լու-
սավորության մասին:

Ֆրոլովների մոտ գիշերային զրույցներից մեկից
հետո, արդեն լուսաբացին, բոլոր յերեքն ել՝ Նեվե-
րովը, Գրանովսկին և Տուրգենևը՝ նրան հանդիսավոր

խոստումն տվին իրենց ամբողջ կյանքը, իրենց բո-
լոր ուժերը նվիրել այդ նպատակին...

Սպասակոյեչի աշխարհն իրեն հիշեցնում եր
Վարվառա Պետրովնայի նաձականերով: Նա այժմ ան-
սահման հեռու յեր թվում: Գարնան մոտ վարվառա
Պետրովնան սկսեց նրան կանչել տուն, Ռուսաստան —
իսկ նա չերազում եր հարավ, Իտալիա մեկնելու մա-
սին: Բայց մայիսին յեկավ մի անսպասելի լուր, վոր
ծանր կերպով ապշեցրեց նրան. «Սպասակոյեչի տունն
այրվեց և քանդվեց: Այո... այո... այո: Սպասակոյեչն
այրվեց, սկսած աջ կողմը գտնված յեկեղեցուց, և
ամբողջ շրջապատը մինչև հորյեղբոր կողաշենքը»:

Վարվառա Պետրովնան նրա վերադարձն եր պա-
հանջում. «Յես ուզում եմ, ինձ անհրաժեշտ ե, վոր-
քան կարելի ե, շուտ տեսնել քեզ: Յես հուսահատվել
եմ և ուժ առնելու կարիք ունեմ: Ո՛ր, աստված իմ...
աստված... Ինչ խաչ ե, վոր դնում ես իմ ուսերին...»

Սպասակոյեչի հին տան հետ կապված եր կյանքի
մի ամբողջ շերտ: Նա այլևս գոյություն չունեիր:
Բայց պետք եր վերադառնալ Ռուսաստան:

1840 Թ. Ի. Վ.

«Վորխան ինձ համար նեա-
նակայից ե 1840 թիվը»:

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ Մ. ԲԱԿՈՒՆԻՆԻ Ե.
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ:

«Հունվարի սկզբին մի մարդ ծածկասայլով ար-
շավում ե Ռուսաստանի ձյուններով: Խմորումը հազիվ
սկսվել ե նրա մեջ — աղոտ մտքերը հուզում են նը-
րան: Նա չերկչոտ ե և անպտուղ մտածկոտ: Նրա հետ

նրա կողքին գնում ե մի հաստ մարդ, դեսպանութ-
յան քարտուղարը... Նրանք գնում են, բաժանվում
են Վիեննայում: Յերիտասարդը տասն որով մնում ե
Ավստրիայի փարթամ մայրաքաղաքում և մեկնում ե
Իտալիա, Հոմո»,

Իսկ հաստ մարդը, դեսպանութան քարտուղարը,
մեկնելուց առաջ գրում ե իր յեղբորը իր ուղեկցի,
յերիտասարդի մասին. «Յես Պետերբուրգը թողնում
եմ Իվան Տուրգենևի ընկերակցությամբ, վորն ինձ
հեռ մեկնում ե Հոմո և այնտեղ կմնա մի ամիս. հե-
տո նա կձանապարհորդի Իտալիայում և կվերադառ-
նա Բերլին իր պարագմունքները վերջացնելու: Նա
զարգացած և խելոք մարդ ե, բայց իսկական Լենսկոյ
ե, Գետտինգենի ուսանող»:

Գրանից հինգ ամիս առաջ Իվան Սերգեևիչը վե-
րադարձավ Ռուսաստան: Հիմա նա շտապում եր վե-
րադառնալ Յեվրոպա: Վարվառա Պետրովևան ստիպ-
ված յեղավ թույլ տալ նրան մեկնելու նրա պարագ-
մունքներն այնտեղ չեյին ավարտվել: Յեվ նորից,
ինչպես յերկու տարի սրանից առաջ, նա պարագ-
մունքներն սկսելուց առաջ ցանկանում եր ճանա-
պարհորդել:

Իտալիա և Հոմո... Նրանք վաղուց եյին նրան
հրապուրում: Բայց սքանչելի քաղաքում մնալը նրա
համար ավելի նշանակալից չեղավ, քան նա կարծում
եր: Ստանկելիչը չեկավ Հոմո: Նա մենակ եր: Գրա-
նովսկին և Նեվերովը Ռուսաստանումն եյին: Այդ
ժամանակվա ընթացքում նրա հին հիվանդութունը
զգալիորեն սուր ընույթ ստացավ: Նրա ձայնը մի
տեսակ հիվանդոտ խոսողութունն ստացավ, չոր հա-

զը հաճախ խանգարում եր խոսելուն: Բայց նա ելի
նուշնն եր: «Ռոյորն, ինչ վոր նա ասում եր, լի յեր-
վսեմ ճշմարտությամբ և ինչ վոր պայծառ գեղեցկու-
թյամբ ու յերիտասարդությամբ»: Այս անգամ նրանք
մտերմացան: Նրանք ամեն որ տեսնվում եյին:
Ստանկելիչն այժմ դեպի նա լավ եր տրամադրված:
Տուրգենևը յերջանիկ եր: Նա ապրում եր լի կյան-
քով: «Ինչպիսի ազահությամբ եյի չես լսում նրան,
յես, վոր լինելու եյի նրա վերջին ընկերը, վորին նա,
իր որինսկով, իր կյանքի, իր ճառերի պոեզիայով
նվիրեց ծառայելու ճշմարտությանը»: Ռուսների մի
փոքրիկ խմբակի ընկերակցությամբ նրանք թափա-
ռում եյին Հոմոյի շրջակայքները, դիտում հուշարձան-
ներն ու հնութունները: Ստանկելիչն «Իրեն վատ եր
զգում, բայց նրա վողին յերբեք չեր ընկձվում... Յեր-
բեմն, սակայն, նա վախ եր զգում՝ կարծես մոտա-
լուտ մահվան նախազգացում»: Մի անգամ, արդեն
յերեկոյան Ալբանոյից բաց կոլյասկայով վերադառ-
նալիս, նրանք հավասարվեցին մի բարձր ավերակի,
վոր ծածկված եր բազեզներով, Տուրգենևին «չգիտե-
ինչու հանկարծ խելքին փչեց բարձր ձայնով կանչե-
լու. «Divus Caius Julius Caesar»¹, — ավերակում
արձագանքը հնչեց տնքոցի պես: Ստանկելիչը, վոր
մինչ այդ շատ զրուցասեր եր և ուրախ, հանկարծ
գունատվեց, լոց և, մի քիչ անց, ասաց ինչ վոր
տարրինակ արտահայտությամբ. «Ինչո՞ւ դուք այդ
արիք»:

Հոմոնում Տուրգենևը տարվել եր նկարչությամբ:

¹ Աստվածային Կայոս Հուլիոս Կեսար:

Նա դասեր եր առնում գերմանացի նկարիչ Ռուհեյի մոտ: Նկարում եր ծաղրանկարներ: Ստանկևիչը նըրան «դանազան զվարճալի սյուսեներ եր տալիս և դրանով շատ եր զվարճանում»:

Այդ լերջանիկ կյանքը գարնանը պետք ե ընդհատվեր: Պետք եր ճանապարհորդությունը շարունակել:

Նորից, ինչպես յերկու տարի առաջ, սկսեցին սուրբալ քաղաքներն ու լերկրները: Նա մի քաղաքից մյուսն եր շտապում, վոչ մի տեղ յերկար կանգ չառնելով: Նեպոլ, Լիվոռնո, Պիզա, Ճենովա, Լագո-Մաջիորե... Հետո Շվեյցարիա՝ Սեն-Գոտարդ, Լյուցերն, Բազել... Նա նորից Գերմանիայումն ե՝ Մանհեյմ, Մայնց, Լայպցիգ... Վերջապես Բերլին, վորտեղ արդեն մոտ մի տարի չեր յեղել: Ճանապարհորդության վերջին լեկավ մի սարսափելի լուր՝ իտալական Նոլի քաղաքում մեռել եր Ստանկևիչը: «Մեղ մեծ դժբախտություն պատահեց, — գրում ե նա Գրանովսկուն: — Հաղիվ եմ ուժերս հավաքում գրելու համար: Մենք կորցրինք այն մարդուն, վորին մենք սիրում եյինք, վորին մենք հավատում եյինք, ով մեր հըպարտությունն եր և հույսը... Հունիսի 24-ին Նովիում մեռավ Ստանկևիչը... Նա պիտի մեռներ: Նա այնքան խորը, այնքան անկեղծորեն եր ընդունում և սիրում կյանքի սրբությունը, չնայած իր հիվանդությանը, նա վայելում եր մտածելու, գործելու, սիրելու յերանությունը. նա պատրաստվում եր նվիրվելու մի աշխատանքի, վոր անհրաժեշտ եր Ռուսաստանի համար: Մահվան սառն ձեռքն իջավ նրա գլխին, և մի ամբողջ աշխարհ կործանվեց... Յես յետ

եմ նայում, վորոնում եմ — իզուր: Մեր սերնդից ով փարոզ ե փոխարինել մեր կորուստը: Վհր արժանավորը մահացածից կընդունի նրա մեծ մտքերի կտակը և չի թողնի, վոր կործանվի նրա ազդեցությունը, կընթանա նրա ուղիով, նրա վոգով, նրա ույժով... Բայց վոչ, մենք չպետք ե վստովենք և ընկճվենք: Համախմբվենք, ձեռք տանք իրար, ավելի սեղմ խմբվենք. մեզանից մեկն ընկավ՝ գուցե լավագույնը: Բայց յելնում են, յելնում են մյուսները... Վաղ, թե ուշ՝ լույսը կհաղթի խավարին...»

Նա նորից Բերլինումն ե: Այժմ այդ քաղաքում հին ծանոթներից վոչ վոք չկար: Կարծես Ստանկևիչի մահվամբ նրա համար բացված ձեղքվածքը փակելու համար նա նոր ծանոթություն ե հաստատում, վոր նրա համար արտակարգ նշանակալից յեղավ: 1840 թ. ամառը Բերլին ե գալիս Միխայիլ Բակունինը:

Բակունինը, ապագա հռչակավոր անարխիստը, այդ ժամանակ հեռու յեր քաղաքական գործունեյությունից: Նա հեռու յեր նաև իր հասագակիցները, նա այն ժամանակ հեգելյան փիլիսոփայության մոլի յերկրպագու յեր: Տաղանդավոր հուստոր, փայլուն և անխոնջ վիճարանող, նա իր ժամանակակիցների վրա հսկայական ազդեցություն ուներ:

Տուրգենևն այժմ ընկավ նրա ազդեցության տակ՝ հափշտակությամբ, հիացմունքով: Արդեն ծանոթության սկզբին, նա նախորդ ճաշակում եր այն ուրախությունը, վոր նա կստանա Բակունինի հետ շփվելով: «Մենք ձմեռվա ընթացքում պետք ե աշխատենք, յեռանդով աշխատենք, — գրում ե նա: — Յես

հուսով եմ, վոր մենք մեր ժամանակը հրաշալի կանց-
կացնենք: Համալսարան, պարապմունքներ, իսկ յե-
րեկոյան կհավաքվենք քո քրոջ մոտ, կգնանք լավ
յերաժշտություն լսելու. կկազմենք ընթերցանու-
թյուններ ծրագիր: Վերջերը մեզ մոտ կգա: Սպա-
սիր, թող հաշվեմ, թե վայելքի քանի ամիս ունենք,
հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի մեկը — 7 ամիս,
210 որ... Դու չես հավատա, թե յես վերջան չերջա-
նիկ եմ, վոր քեզ կարող եմ դու ասել: Ավելի ուշ
նա Բակունինի վրա ուրիշ աչքերով կնայի, բայց
այժմ նրա հետ ունեցած ծանոթությունն իր կյան-
քում ամենալուրջ ետապն է համարում. «Ստանկևիչ,
իմ վերածնունդը չես քեզ եմ պարտական. դու ինձ
ձեռք մեկնեցիր և ինձ նպատակ ցույց տվիր... Յես
յեկա Բերլին, անձնատուր յեղա գիտություններին —
իմ յերկնքում առաջին աստղերը վառվեցին — և վեր-
ջապիս ճանաչեցի քեզ, Բակունին: Ինչքան բանով
եմ քեզ պարտական, հաղիվ թե կարողանամ ասել, և
չեմ կարող ասել. իմ զգացմունքներս դեռ ևս
ալիքներով են գնում և դեռ ևս բավականաչափ չեն
հանդարտվել, վորպեսզի բառերով արտահայտվեն...
Ինձ մոտ, իմ ենցիկլոպեդիայի տիտղոսաթերթի
վրա գրված է. Ստանկևիչը մեռավ 1840 թվի հուլիսի
24-ին, իսկ հետո՝ Բակունինի հետ յես ծանոթացա 1840
թվի հուլիսի 25-ին: Իմ նախկին ամբողջ կյանքից յես
չեմ ուզում ունենալ ուրիշ հիշողություններ»:

Ընկերները ընակվեցին միասին, մի բնակարա-
նում: Յեվ նրանք իրոք յեռանդով եյին աշխատում:
Ամբողջ օրերով նրանք նստում եյին Հեգելի «Տրա-
մաբանության» վրա: Առավոտյան միասին եյին հա-
մալսարանում, Վերջերի դասախոսություններին, ցե-

րեկը միասին աշխատում եյին տանը, չերեկոյան
թատրոնում եյին լինում, յերբեմն ել՝ բեթհովենյան
սիմֆոնիաներին: Նրանց ամենուրեք միասին եյին
տեսնում: Բարձրահասակ, վայելչակազմ, թավշա-
բաճկոններով — Տուրգենևը կանաչ Բակունինը կարմ-
րակապույտ — նրանք միասին գալիս եյին Ունտեր-
Լին - Լինդենի վրա գտնվող կաֆեն լրագրեր կար-
դալու: Հաճախ յերեկոները, չերբեմն թատրոնից հե-
տո նրանք յերկար նստում եյին Բակունինի քրոջ,
Դյակովայի մոտ: Այստեղ, թեյ խմելիս անվերջ զրու-
ցում եյին: Դյակովան իր նոր ծանոթի մասին գը-
րում էր Ռուսաստան. «Մաքուր, պայծառ, քնքույշ
հոգի յե. ինձ թվում է, թե յես արդեն շատ ու շատ
տարիներ է ծանոթ եմ նրան...» Նույնիսկ յերկար
զրույցներ տեղի չեր ունենում յերեկոները նաև տա-
նը, Բակունինի սենյակում: Նրանց ելությունը լի
յեր հույսերով, նախազգացումները տոչորում եյին
նրանց կուրծքը... Այլ ուշ հսկումներն անվերջանա-
լի եյին. Տուրգենևը գրավում էր իր սիրած տեղը
վառարանի մոտ, Բակունինը պառկում բազմոցի վը-
րա: Յերբեմն գալիս էր ուսաներից վորեւ մեկը՝ փիլի-
սոփայական զրույցի համար: Այն ժամանակ սկսվում
եյին տաք վիճարանություններ, վոր վերջանում է-
յին այն ժամին, յերբ բարի բյուրգերներն արթնա-
նում եյին քնից:

Որերն անցնում եյին ինչ վոր չտեսնված արա-
գությամբ. դրանք նրա կյանքի ամենայերջանիկ ու-
րերն եյին: Յերկու հարյուր տասն որն անցան ան-
նկատելիորեն: Յեկավ դարունը: Պարապմունքները

վերջանում էյին: Պետք էր մտածել տուն, Ռուսաստան վերադառնալու մասին:

1841 թ. մայիսին նա վերադառնում էր «Ալեքսանդրիա» շոգենավով: Մոտենում էյին ուսական փոխընթաց: Յերեք տարի առաջ, նույնպիսի մայիսյան որերին, նա այս նույն ջրերով լողում էր հակառակ ուղղութեամբ: Նա հիշեց, թե ինչպես այն ժամանակ «խայտառակվեց», ինչպես վարվաւ Պետրովնան էր գրում նրան, — լուրերը նրան էլ էյին հասել: Վորքան շատ բան է փոխվել այն որից: Ուսումնաւարտված էր: Նա այժմ չերազում էր իսկական աշխատանքի մասին, գիտական կարչերալի, Մոսկվայի համալսարանում փիլիսոփայութեան ամբիոնն ստանալու մասին:

Մոտենում էյին Պետերբուրգին:

Թափառումների տարիներն ավարտված էյին:

ՄԱՍԸ ՅԵՐԲՈՐԴ

ԲԵԼԻՆՍԿԻ

«Յես նրան սիրեցի անկեղծ և խոր»:

ՏՈՒՐԳԵՆԵՎԸ ԲԵԼԻՆՍԿՈՒ ՄԱՍԻՆ

«Յերբ դուք մեկնեցիք, յես տեսա, վոր ձեր արջավանքներն լմ բնակարանի վրա սիակն էյին, վոր ինձ կյանք էյին տալիս»:

ԲԵԼԻՆՍԿԻՆ — ՏՈՒՐԳԵՆԵՎԻՆ

1844 թ. ամառը, Պետերբուրգի Անտառային ինստիտուտը շրջապատող սոճիների պուրակներում ամեն որ գրասնում էյին չերկու մարդ. մեկը բարձրահասակ, լայնաթիկունք, մուգխարտյաշ մազերով, այն ժամանակվա նորաձև «լիստյան» սանրվածքով, մյուսը՝ միջահասակ, վտիտ, կռացած, ներս ընկած կրծքով, փոքր դեմքի վրա խուզած բեղերով, խիտ խարտյաշ մազերով, վոր փնջով ընկնում էյին ճակատին, շարունակ հագացող: Նրանք տաք-տաք խոսում էյին,

վոր հաճախ վեր եր ածվում վեճի: Բարձրահասակը խոսում եր բարակ կերկերացող ձայնով, մի փոքր շշնջալով, իսկ նրա խոսակիցը՝ Թուլլյ, մի փոքր խըռպոտ ձայնով: Նա յերեսայի նման ծիծաղում եր:

Դրանք Տուրգենևն ու Բելինսկին եյին:

Մի տարու չափ ե, արդեն ծանոթ եյին, բայց մինչև այդ ժամանակ քիչ եյին տեսնվում: Այժմ ապրելով ամառանոցում միմյանցից վոչ հեռու, նրանք հանդիպում եյին ամեն որ, չերկար ժամանակ իրարից չեյին բաժանվում և ժամանակն անց եյին կացնում անվերջ խոսակցութուններով: Բելինսկին, վոր կրքոտ և զրավվող մարդ եր, ջերմորեն հետաքրքրվում եր ընդհանուր փիլիսոփայական հարցերով: Այդ հարցերը նրան տանջում եյին, «գրկում եյին քնից, սննդից, կրծում և աչրում եյին նրան»: Նա մի ինչ վոր ազահուլթյամբ եր խոսում այն բարեկամների հետ, վորոնք կարող եյին ոգնել նրան այդ հարցերը լուծելու: Տուրգենևը, վորպես մի մարդ, վոր չերկու տարի ապրել եր Բերլինում, հեգելյան իմաստության բուն աղունքների մոտ, կարող եր հաղորդել նրան ամենաթարմ, վերջին յեզրակացութունները: Յեվ նա հետաքրքրությամբ նրան հարց ու փորձ եր անում, լսում, առարկում եր, զարգացնում եր իր մտքերը:

Տուրգենևը հեշտությամբ հմայում եր իր խոսակիցներին: Աչքի ընկող կրթութունը և ուժեղ միաքը նրա մեջ միանում եյին զարմանալի պատմողի ձիրքի հետ: Բելինսկին նույնպես հմայված եր նրանով: «Դա մի անսովոր խելոք մարդ ե, և ընդհանրապես լավ մարդ ե, — զրում եր նա իր բարեկամներին»

Տուրգենևի մասին: — Նա ունի չարություն, և՛ մաղձ, և՛ հումոր. նա խորը կերպով ըմբռնում ե Մոսկվան և այնպես ե վերարտադրում, վոր յես հաճուլքից արքենում եմ...»

Յերեք տարի յեր անցել այն որից, ինչ Տուրգենևը վերադարձել եր արտասահմանից: Գիտական կարյերայի մտադրությունը նա թողել եր ընդմիշտ, չնայած, վոր մագիստրոսական քննությունները աղվել եր: Հպատակվելով մորը, և ավելի շատ իրեն համար վորեւ կարյերա ընտրելու անհրաժեշտությունից ազատվելու համար, նա մի տարի առաջ ծառայության եր մտել ներքին գործոց մինիստրության մեջ: Ծառայությամբ նա քիչ եր հետաքրքրվում: Նրան այլ բան եր զբաղեցնում: Նրան զրավում եր գրականությունը: Այս յերեք տարվա ընթացում «Отечественные записки» ժողովում յերբեմն յերբեմն յերևում եյին վոտանավորներ «Տ. Լ.» (այսինքն՝ Տուրգենև — Լուտովինով) ստորագրությամբ: Անցած ամառ նույն ստորագրությամբ լույս տեսավ մի զրբուկ. «Պարաշա: Չափածո պատմվածք» վերնագրով: Յեվ յերկու ամսից հետո ել, բանալով «Отечественные записки»-ն, նա զարմացավ. մի մեծ հոգվածով նրա «Պարաշան» յերմորեն գովում եր Բելինսկին: Նրա համար դժվար եր հավատալ դրան: Նա այդ բանին պատրաստ չեր Յեվ տարրինակ ե՛ նա ավելի շատ շփոթված եր, քան թե ուրախացած: Դրանից հետո նա նույնիսկ հրաժարվեց իր պոեմից «վոչ, վո՛չ, — ասաց նա իրեն շնորհավորող մարդուն: — Դա բոլորովին ել յես չեմ»: Նա իսկապես շփոթված եր:

«Պարաշախ» հաջողությունը նրա համար ան-

սպասելի յեր: Ավելի ևս անսպասելի յեր նրա համար, նրա հաջողութունը վարվառա Պետրովնայի մոտ: Վանիշկաչի պոեմը նրան դուր եր յեկել: Նա այդ չեք սպասում: «Յես կարծես քո մեջ տաղանդ եմ տեսնում... — գրում եր նրան վարվառա Պետրովնան, — հանաքը դենը, հրաշալի յե: Յես քննադատութունը չեմ կարգացել, բայց „Отечественные записки“ — յում աված վերլուծութունն արդարացի չե, և շատ տեղեր հրաշալի յեն: Հրաշալի չե հակառակ բոլոր քննադատութունների, — հրաշալի յե և յերդը և վերջը, վորը, յեղբայրս ասում եր, թե քննադատված ե, — ինձ համար սքանչելի յե... սիրուն... դեկրետ, համեստ: Յես, — Վոլտերի խոհարարուհիս, — չեմ կարողանում արտահայտել... Հիմա ինձ մատուցում են մորի: Մենք գյուղացիներ ենք, սիրում ենք այն բոլորն, ինչ վոր իրական ե: Ուրեմն, քո «Պարաշան», քո պատմվածքը, քո պոեմը... մորու բուրմունք ունի...»

Բեկինսկու հետ շփվելը, նրա բարեկամութունը Տուրգենևի համար թանգ եյին: Մեծ քննադատի ըստույզ ճաշակը, նրա շեշտակի գատողութունը, նրա անսխալ հոտառութունը, նրա համարձակ, հաճող մունքով թելադրված գատավճիռները հակայական ազդեցութուն ելին գործում: Յեվ այդ մարդու անսովոր արդարամտության կողքին, նրա անկեղծության, վոր արդարամտության կողքին, նրա անկեղծության, մաքրության և իր համոզմունքներին մ լեռանդ հավատարմության կողքին նրա յերիտասարգ տարիների արատները դառնում եյին անհնարին՝ քերը գեպի եֆեկտավոր Ֆրազը, դեպի ամեն տեսակի բան հորինելու սովորութունը, տարրորինակութունների հետեվից ընկնելու սերը: Բեկինսկին ներում եր նրա պա-

կասութունները նրա խելքի և տաղանդի համար: «Յես ինչ գործ ունեմ Տուրգենևի վրիպումների և շափազանցումների հետ, — ասում եր նա, — Տուրգենևը գրել ե «Պարաշան». դատարկ մարդիկ այդպիսի գործեր չեն գրում»: Բացի դրանից նա տեսնում եր, վոր այդ շինծու հատկութունների տակ թագնված ե բարի և փափուկ սիրտ: Յեվ հաճախ նա բարեսիրտ կատակով հանդիմանում եր նրան. «Այ տղս, զգուշացիր — յես քեզ անկյուն կկանգնեցնեմ»:

Իսկ տղան շարունակում եր վոտանավորներ և պոեմներ գրել: Մի տարի հետո նա թ. դնում ե ծառայութունը, վոր մորը մեծ անբավականութուն ե պատճառում: Մոր հետ ունեցած հարաբերութունները վատանում են: Նրանից անբավական լինելով, նա պակասեցնում ե նրա միջոցները: Յերբեմն - յերբեմն նա զժվար գրության մեջ ե ընկնում:

Նրա ծանոթութուններն ընդարձակվում են: Վոմանց նա իրենից վանում ե որիգիտալ յերեւելու իր ցանկությամբ և տարրորինակ հնարումներով, մյուսներին համայում ե իր պայծառ ձիրքով: Կերցենին նա թվաց կրթված և խելոք ինտեսակով, մի մարդ, վոր լի յե անսահման թեթեվստիկությամբ, իսկ յերիտասարգ «Բատոստեսկին» «քիչ» մնաց սիրահարվեր նրան»: «Բանաստեղծ տաղանդավոր, արիստոկրատ, գեղեցիկ, հանրուստ, խելացի, կրթված, — վոգեվորված գրում եր նրա մասին Դոստոևսկին: — Յես չգիտեմ, թե ընտելութունն ինչից ե զրկել նրան...»

Բեկինսկու շուրջը խմբված Պետերբուրգի գրականագետների խմբակում նա դարձավ լուրային: Այստեղ եյին Նեկրասովը և Պանսևը, Դոնչարովը և Դոս-

տոնակին, Աննենկովը և Գրիգորովիչը, Իրուժինինը և Բոտկինը: Նրանք տարբեր տաղանդների, ճաշակների տեր լինելով, լինելով գանազան սոցիալական շերտերից, միացած էին ընդհանուր ոպոզիցիայով դեպի ճորտատիրական իրավակարգը: Այն ժամանակ այդ հողի վրա միանում էին ամենատարբեր տարրերը: Դա «արևմտականների» խմբակն էր, այն մարդկանց, վորոնք ձգտում էին Ռուսաստանի զարգացումը տանել այն ուղիով, վորով ընթանում էին յեվրոպական պետությունները: Տուրգենևը, վոր «Գերմանական ծովից դուրս լույս իբրև արևմտական», բնականորեն միացավ այդ մարդկանց: Նրանք իրենց հակադրեցին «սլավոնասերներին», Մոսկվայի խմբավորմանը, վոր ազնվականություն պահպանողական ազրարային խմբակն էր ներկայացնում: Արևմտականություն խմբակի վողին ու կենտրոնը՝ Բելինսկին, «սլավոնասերների» ամենաջերմ, ամենամոլի հակառակորդն էր:

Այդ խմբակում Տուրգենևն արագ դարձավ ընդհանուր սիրելին: Նա հաճախ գնում էր Փոնտանկա, Անիչկինի կամուրջից վոչ հեռու, Բելինսկու մոտ «սիրտը բանալու»: «Այն ժամանակ ծանր ժամանակներ էին... Մտովի մի հայացք ես գցում շուրջ՝ կաշառակերությունը ծաղկում է, ճորտատիրական իրավունքը կանգնած է ժայռի պես, առաջին պլանում զորանոցն է, չկա դատարան, լուրեր են պտտվում համալսարանների վակման մասին... Ինչ վոր մեայլ ամպ շարունակ կախված է ամբողջ այսպես կոչված գիտնական, գրական գերատեսչություն վրա, իսկ դրանից բացի մատնությունները Ֆլորում և սողոսկում են ամեն տեղ, յերիասարդություն մեջ չկա վոչ ընդ-

հանուր կապ, վոչ ընդհանուր հետաքրքրություններ, վախն ու ստորաքարշությունն իշխում են ամեն բանում... Յեվ ահա, դալիս ես Բելինսկու բնակարանը, գալիս ե մյուսը, յերրորդ բարեկամը, խոսակցություն է սկսվում և մարդու սիրտը թեթեվանում է...»

1846 թ. աշնանը ընկերական խմբակը տարված էր նշանակալից դեպքով: Նեկրասովն ու Պանսեը ձեռնամուխ էին լինում իրենց սեփական ժուռնալի հրատարակությանը: Յենթադրվում էր, վոր նրա մեջ կենտրոնական ֆիգուրան կլինի Բելինսկին: Դա „СОВРЕМЕННИК“-ն էր, վոր ձեռք էլին բերել Պ. Ա. Պլետնյովից:

1847 թ. հունվարի սկզբին լույս տեսավ առաջին համարը: Դա Տուրգենևի կյանքում կապված է լուրջ շրջադարձային մոմենտի հետ՝ այդ համարում տպագրված էր նրա «Սոր և Կալինիչ» ակնարկը — «վորսորդի հիշատակարանը» սերիալի առաջին ակնարկը: Մինչև այդ նա գլխավորապես տպագրում էր վոտանավորներ և պոեմներ, վորոնց նկատմամբ Բելինսկին արդեն վաղուց էր սառել: Նրանց նկատմամբ ինքն էլ վաղուց թերահավատ էր: «Սոր և Կալինիչը» ունեցավ հսկայական, միահամուռ և ազմկալից հաջողություն: Իրանով նա լավագույն գրողների շարքն էր անցնում: Բելինսկին նրան նշանավոր ապագա յեր գուշակում: Բայց նրա մտքերն այդ ժամանակ հեռու էին: Արտասահմանը քաշում էր նրան: Նա պատրաստվում էր մեկնել Յեվրոպա, առաջին հերթին նորից Բերլին... Այնտեղ նշանակված էին Ֆրանսիական հոչակավոր յերգչուհի Պոլինու Վիարդոյի գաստրոլները: Տուրգենևը նրա հետ ծանոթացել էր 1843 թ.

Փարիզում, և նա դառավ նրա բարեկամը: Այդ բարեկամութիւնը նա մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց:

Նա պատրաստուում էր շուտով թողնել Պետերբուրգը, բաժանվել բարեկամական խմբակից...

1847 թ. փետրվարին նա արդեն Բերլինումն էր: Այդ քաղաքն առաջվա նման մայրաքաղաքի քիչ էր նման: Արտաքինից այստեղ վոչինչ չէր փոխվել: Կառավարներն առաջվա նման կրում էին նույն անբնական գլխարկները: Փողոցներում զբոսնում էին նույն պիտի խարոյաչ սպաներ: Բայց ներքին մեծ փոփոխութիւններ էին կատարվել: Առաջադիմական բանակում զգացվում էր նախահեղափոխական վերելքի շարքը: Կարծես բոլորը ինչ վոր բան էին սպասում:

Տուրգենևը շրջում է ամբողջ Բերլինը, դիտում և լսում է, լինում է հին ծանոթների մոտ: Վարնհագեն Փոն-Նեդեյի հետ հանդիպումը նրան հիշեցնում է Յրոլոմիների մոտ անցկացրած նախկին յերեկոները, ուր նա դախ էր «բերանբաց լսելու և լսելու»: Հիմա նա չի լսում: Վարնհագենին նա պատմում էր Ռուսաստանի, ուստաց զրականութիւն, յերիտասարգ սերնդի մաքին, վորն ստիպված էր պարփակվել ինքն իր մեջ: Պաշտոնական Ռուսաստանի հասցեչին նա գերմանական լիբերալներից ստիպված էր բավականին անեծքներ լսել: Ռուսական ցարը, այդ «յեվրոպական ժանդարմը», վոր Յեվրոպայում պահպանական Ֆոնկլիաներ էր կատարում, պրուսական կառավարող շրջանների վրա ճնշում գործադրելով, կանգնած էր պրոգրեսիվ շրջանների սահմանադրական

ձգտումների դեմ: Այդ անեծքներին Տուրգենևը պատասխանում էր վոտանավորներով.

«...Если нам теперь по праву
Проклятия гремят кругом—
Мы наш позор и нашу славу
Искупим славой и добром...
Всеми, чем ваша грудь согрета—
Всеми, сочувствуем и мы;
И мы желаем мира, света,
Не разрушенья — и не тьмы.

(...Յեթե մեր հասցեչին այժմ չորս կողմից իրավացիորեն անեծք են հնչեցնում — մենք մեր նախատինքն ու մեր համբավը կքաղվենք փառքով և բարիքով... Այն բոլորին, ինչ վոր ձեր կուրծքն է ջերմացրել, այդ բոլորին մենք ել ենք համակիր. մենք ել խաղաղութիւն, լույս ենք ուզում և վոչ թե կործանում, և վոչ խավար):

ՎԵՐԱԴՐՁ

1850 թ. ամառը Տուրգենևի Մոսկվայի և Պետերբուրգի բարեկամների մեջ տարածվեց մի ուրախալի լուր. իվան Աերգեյեվիչը վերադառնում է Ռուսաստան: Նրան սպասում էին: Անհամբերութիւնով սպասում էր նաև Վարվառա Պետրովնան, թեև Վարվառա Պետրովնայի կողմից այժմ նա շնորհագրկված էր:

Յեվ, իսկապես, նա հուլիսին յեկավ: Վորքան շատ էր փոխվել նա իր բացակայութիւն տարիներին: Նրա խիտ թուխ մազերի մեջ տեղ տեղ նկատելի կերպով սպիտակ մազեր էին յերեացել: Խիտ ալիխառն

եր նաև մորուքը, վոր նա այժմ պահում եր: Յեզ թեև նա ինչպես անցյալում, առաջվա նման ամեն յերեկո Վարվառա Պետրոֆուայից բաժանվելուց առաջ միշտ նույն ձայնով ասում եր նրան սովորական ֆրազան. «Bonne nuit, maman!», իսկ նա ելի նույն ձևով, ինչպես մանկության տարիներին, խաչակնքում եր, բայց արդեն առաջվա Վանիչկան չկար: Նա արդեն հասուն մարդ եր դարձել:

Բարեկամները նրան ընդունեցին գրկաբաց: «Նա... ելի նույն սիրելին և, ինչ վոր եր առաջ»,— գրում ե նեկրասովը: «Նա վերագործավ վորպես աշխարհիս ամենահամակրելի, սիրալիր և բարեսիրտ մարդը»,— գրում ե Բոտկինն Աննենկովին: «Յերեակայեցեք. նա ավելի սիրելի յե դարձել, և յես նորից նրա հետ տեսակցության եմ սպասում աչնպես, ինչպես սիրած կնոջ հետ»,— գրում ե նորից Բոտկինը:

Այս յերեք տարիների ընթացքում նա շատ ե վերապրել մտածել և զգացել: Նա շատ եր աշխատում: Ամենից առաջ պետք եր աշխատել ապրելու համար,— այդ տարիների ընթացքում Վարվառա Պետրոֆուան նրան փող չեր ուղարկում: Նա աշխատում եր և՛ Փարիզում, վոր ցնցված եր 1848 թ. բուռն անցքերով, և՛ գլուղական մենության մեջ Կուրտավնել ամրոցում, վոր պատկանում եր նրա բարեկամներ Վիարդոսներին: Փարիզում ապրելու միջոց չունենալով, նա յերկար ժամանակով ապրում եր ալստեդ, յեռանդով աշխատում եր և շատ կարգում: Այս տարիներում նա գրեց «Վորսորդի հիշատակարանի» ակնարկների մեծ մասը, վոր նրան ժողովրդականութուն տվին,— նրանք տպագրվում եյին «Современ-

НИК»-ում — և մի քանի կոմեդիաներ: Յերբնն, Կուրտավնելի մենավոր կյանքում, հայրենիքի կարոտը համակում եր նրան: Մի անգամ նա Կուրտավնելի դաշտերում տեսավ մի ագռավ: «Այդ հայրենակցուհու տեսքն ինձ հուզում ե. յես հանում եմ գլխարկս և նրանից իմ հայրենիքի մասին լուրեր եմ խնդրում: Ճշմարիտ, յես համարյա զգացված եյի»: Բայց միաժամանակ հաճախ, հիշելով Ռուսաստանի մոռյլ իրականութունը, նա մտածում եր ընդմիշտ մնալ արևմուտքում: Ի՞նչ եր նրան սպասում հայրենիքում:

Մոսկվայում կյանքն սկսվեց մոր հետ վերջնակա նապես կռվելով: Դավաղուց եր նախապատրաստվում. Վարվառա Պետրոֆուան անբավական եր վրդու կյանքով: Նա նրա համար յերազում եր փայլուն կարյերա և հարուստ ամուսնութուն: Նա բնարեց գրողի ուղին և փշրեց այդ յերագները: Վերջին վճռական խըզում: Մոսկվայում տասն որ մնալով, նա մեկնեց Տուրգենևո—Մպասկոյեյից տասներեք վերստի վրա գլուխով մի փոքրիկ գյուղ, վոր պատկանում եր նրա հորը: Այնտեղից, յերկու ամիս հետո, անցավ Պետերբուրգ:

Մինչ այդ Վարվառա Պետրոֆուան մեռնում եր: Նա չեր կանչում վորդուն, վորին իր սրտի խորքում սիրում եր ջերմորեն: Նա իրեն հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջը: Մահվան նախորդակին յերբ սկսվեց հոգևաբքը, հարևան սենյակում նրա հրամանով նվագախումբը պոլկաներ եր նվագում:

Նոյեմբերի 16-ին նա վախճանվեց: Չափազանց ուշ տեղեկացած լինելով, Իվան Սերգեևիչը Մոսկվայ յեկավ միայն նրա թաղման որը:

Յերբ Վարվառա Պետրոֆնայի գուշքի վրա ից պո-
կեցին կնիքները, Իվան Սերգեևիչը գտավ նրա որս-
գիրը, վոր վերջին ամիսներում մատիաով եր գրված:
Կարգալով մինչև վերջ, նա Պոլինա Վիարգոյին գրեց.
«Ի՛նչ կին եր, սիրելիս, ի՛նչ կին: Ամբողջ գիշերը յես
աչքերս փակել չկարողացա: Թող աստված ների նը-
րան ամեն բան... Բայց ի՛նչպիսի կյանք եր... Ճշմար-
րիտ, յես բոլորովին ցնցված եմ»:

«Վորտորդի հիշատակարանի» հեղինակը դարձավ
յերկու հաղար ճորտ գյուղացիների տեր:

ԳՈԳՈՂԻ ՄԱՆԸ

«Այդ սարսափելի մահը — պատ-
մական դեպք ե...»

Տուրգենևիք՝ Ի. Ս. Ակսակովից
գրած նամակում

1852 թ. փետրվարի 16-ին Մոսկվայում մեռավ
Գոգոլը: Մահվանից առաջ նա այրեց «Մեռյալ հոգի-
ների» յերկրորդ մասը: Պետերբուրգում, վորտեղ Տուր-
գենևն ապրում եր, նրա հիվանդության մասին
մի քանի որ շարունակ մութ լուրեր եյին պար-
տում: Նրա մահվան մասին այնտեղ իմացան մի-
այն 24-ին:

Դրանից մի տարի առաջ Տուրգենևը Գոգոլին տե-
սավ յերկու անգամ: Այժմ նրա առաջ պարզ կանգնեց նրա
Մոսկվայի սենյակը, Նիկիտսկու վրա, և ալք սենյակում,
կանտորկայի շուրջը, գրեչը ձեռին՝ մի լղար մարդ խե-
լացի թեք ճակատով, փոքր շագանակագույն հոգնած
աչքերով, վորոնց մեջ յերբեմն-յերբեմն բոցկլտում եր
ուրախությունը, յերկար, սուր քթով, վոր նրա դեմ-

քին խորամանկ, աղվեսային արտահայտություն եր
տալիս, խուզած բեղերի տակ մի վտոր ուռած ջըր-
թունքներով և փոքրիկ կզակով, վոր մտնում եր լաջն
թավրյա սև փողկապի մեջ: Մուգ վերարկու, կանաչ
թավրյա բաճկոն և շագանակագույն տարատ հագած
այդ մարդն ինչ վոր բանով զավառական ուսուցչի
յեր հիշեցնում: Մինչդեռ նայելով նրան, մարդ աղա-
մայից մտածում եր. «Ի՛նչ խելք, տարորինակ և հի-
վանդ եյակ ես դու»: Պատկերավոր և որիզինալ լեզ-
վով նա խոսում եր գրականության նշանակու-
թյան, գրողի կոչման մասին, այն բանի
մասին, թե գրողն ինչպես պիտի վերաբերվի իր սե-
փական գրվածքներին: Մյուս անգամ նա անսովոր
արվեստով բարձրաձայն կարդում եր «Վերաքննիչը»:

Այժմ նա մեռավ... Տուրգենևը խորապես ցնցվել
եր. «Այնքան խորը, — գրում եր նա իր Մոսկվայի բա-
րեկամներին, — վոր յես նման տպավորություն չեմ հի-
շում... Ծանր ե... ծանր, մոռալ և խեղդուկ... Ճիշտն ասած,
ինձ թվում ե, թե ինչ վոր մութ ալիքներ անհորձանք
միացել են գլխիս վրա — և յես իջնում եմ հատակ,
սառչելով և անզգայնանալով»: Առաջին տպավորու-
թյան տակ նա շտապում ե գրել մի փոքրիկ հոդված.
«Գոգոլը մեռավ: Վճր ուռա հոգուն չես ցնցի այս յեր-
կու բառերը... Նա մեռավ, այդ մարդը, վորին մենք այ-
ժմ իրավունք ունենք, մահվան տված դառն իրավունքը,
մեծ անվանելու...» С. - Петербургские ведомости - ի
համար գրելով այս տողերը, նա հեկեկալով լաց եր
լինում: Իսկ հոդվածը դժվար ուղի պիտի անցներ:
Կառավարությունը ցանկանում եր, վորպեսզի, վոր-
քան կարելի յե ավելի քիչ նկատելի անցներ Գոգոլի

մահը: Պետերբուրգի ցենզուրայի պետը, կոմս Մուսին-Պուշկինը գտավ, վոր անվայել և «Գոգոլի մասին գրել այդպիսի պերճ արտահայտութուններով... և Գոգոլի մահը պատկերացնել վորպես անփոխարինելի կորուստ...» Կառավարութունը չեր ցանկանում նույնիսկ, վոր Գոգոլի անունը հիշվեր մամուլում: Մուսին-Պուշկինը հողվածն արգելեց: «Նա նույնիսկ չամաչեց հրապարակորեն Գոգոլին անվանել լակեյա-կան գրող,— հաղորդում եր Տուրգենևն իր բարեկամին:— Կոմս Մուսին-Պուշկինը չեր կարողանում բավականաչափ ապշել այն մարդկանց հանդիսության վրա, վորոնք խղճում ելին Գոգոլին: Չարժե, վոր ազնիվ մարդն իր ազնիվ ցասումը ծախսի այդ բանի վրա: Մինչև կոկորդը ցեխի մեջ նստած լինելով, այդ մարդիկ սկսել են այդ ցեխն ուտել— անուշ լինի»:

Պետերբուրգում անհաշտության հանդիպելով, Տուրգենևնը փորձում և իր հողվածը տպել տալ Մոսկվայում, ուղարկելով այն իր բարեկամներին: Յեվ իսկապես, մարտի 13-ին այդ հողվածը տպագրվեց «Московские ведомости»-ում, «նամակ Պետերբուրգից» վերնագրով, «Տ—վ» ստորագրությամբ: Պետերբուրգի իշխանութուններն այդ համաբեցին անհնազանդութուն: Ժանդարմների կորպուսի շեֆը Տուրգենևի «զանցանքի» համար կազմեց զեկուցադիր և ներկայացրեց ցարին: Այդ զեկուցադրի մեջ առաջարկվում ևր կանչել Տուրգենևին «նորին կայսերական մեծության սեփական գրասենյակի 3-րդ բաժանմունքը», իսկ Մոսկվայի նրա բարեկամներին, վո-

րոնք նպաստել են հողվածը տպագրելուն, Մոսկվայի զինվորական գեներալ — նահանգապետի մոտ և նրանց զուշայում անելով, «ղիտել տալ, վոր կառավարութունը նրանց վրա ուշադրութուն և շարժերը, և նրանց վրա սահմանել գաղտնի հսկողութուն»:

Թագավորին դա քիչ թվաց: Նրա մակագրութունը գործին բոլորովին այլ ընթացք տվեց: «Յենթապրում եմ, վոր դա քիչ և,— գրեց նա,— ալլ ակնհայտնի անհնազանդության համար մ'կ ամիս բանտ նըստեցնել և աքսորել իր ծննդավայրը՝ հսկողության տակ ընակության»:

Ապրիլի 16-ին պաշտոնաթող կոլլեգիայի խորհրդական և Որյոլի կալվածատեր Իվան Տուրգենևին նստեցրին Պետերբուրգի 2-րդ ծովակալական քաղաքամասի վոստիկանատան կից կալանատանը:

ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

«1852 թիվն ինձ համար կլինի առանց դարնան, ուրեշ վոչինչ»:

Տուրգենևի վիարդոյին գրած նամակից:

1852 թ. մարտին Պետերբուրգի Ոֆիցերսկի փողոցով անցնող մարդիկ ուշադրութուն ելին դարձնում 2-րդ ծովակալական քաղաքամասի շենքի առաջ կառքերի անսովոր շատ կուտակման վրա: Փողոցը փակող բոլոր այդ կառքերը, կոլյասակները և բազմաթիվ սայլակները տեղավորելու համար ստիպված յեղան մի նոր վոստիկանական կետ սահմանել: Այս իրարանցումն առաջ եր յեկել կալանատանը նստած

Տուրգենևի մոտ յեկած հաճախորդների հոսանքով: Ամեն որ նրա մոտ գալիս էյին բազմաթիվ բարեկամներ և ծանոթներ: Գալիս էյին նույնիսկ քիչ ծանոթ մարդիկ: Սրա լուրը շուտով հասավ մինչև բարձրագույն շրջանները՝ այնտեղ մեծ անբավականություն առաջացնելով: Թագաժառանգից այդ բանի մասին հարցում ստանալով, Յորդ բաժանմունքի կառավարիչ գեներալ Դուբելտը հայտնում է ապագա Ալեքսանդր II-ին. «Այլևս նրա մոտ հաճախորդներ չեն թողնվի»:

Յեվ իրոք, նա այժմ մնաց մենակ: Կալանատունը գողերի բանտ էր: Առաջին քսանչորս ժամն սախաված յեղավ նստելու այսպես կոչված «սիբիրկայում»: Սիրալիբ վոստիկանական յենթասպան նրան զբաղեցնում էր, պատմելով ամառային այգում կատարած իր զբոսանքի և «թողունների բուրմունքի» մասին: Հետո նրան տեղափոխեցին մի մաքուր և լույս սենյակ: Վոստիկանական իշխանությունն աչա բանտարկչալի հետ վարվում էր նուրբ քաղաքավարությամբ, նույնիսկ ակնածանքով: Նա հանգիստ էր. ամենավատը — անորոշությունը — չկար, այն բոլորն, ինչ վոր նրան սպասում էր, հայտնի յեր: Նա ուներ զրքեր և թուղթ, նա կարող էր աշխատել: Սկզբում նա զբաղվում էր լեհերենի ուսումնասիրությամբ: Այնուամենայնիվ նա տանջվում էր: Հանգիստ էր մինչև ազատվելը մնացած օրերը: Նրա մտքերը հեռու էյին, հեռագոր Կուրտավներում, վորտեղ նա բազմաթիվ յերջանիկ ժամեր էր անցկացրել: Այնտեղ, Ֆրանսիական կապույտ յերկնքի տակ գտնվում էյին նրա բարեկամները — Վիարգոները: Կալանքն ապագայում կարող էր խանգարել նրան արտասահմանյան անցագիր ստանալ: Դա նշա-

նակում էր նրանց յերբեք չտեսներ: Ահա թե ինչն էր նրան ամենից շատ ճնշում: Սենյակում շոգ էր: Նա յերկար ժամանակ չետ ու առաջ էր քայլում: Հետո նա այս գործի մեջ կարգ մտցրեց: Նրա սենյակը մտնող մարդը մի տարրինակ պատկեր կտեսներ, սենյակի մի ծայրում, սեղանի վրա, դրված էյին յերկու կապուկ խաղաթուղթ: Տուրգենևը մոտենում էր սեղանին, վերցնում մեկ հատ խաղաթուղթ և դանդաղաքայլ տանում էր այն սենյակի մյուս ծայրը: Հետո նույնպիսի չափած քայլերով վերադառնում էր սեղանի մոտ, ելի մի թուղթ վերցնում և նորից տանում: Այդպիսով, մեկը մյուսի հետևից, նա սենյակի մի ծայրից մյուսն էր տանում բոլոր 104 թղթերը: Դա կազմում էր 208 վոտք: Որական նա այդ անում էր յերկու անգամ, նշանակում է 416 վոտք: Յուրաքանչյուր վոտքը ութը քայլ էր: Ընդամենն այդպիսով, նա որական անում էր 3300 քայլ: Դա կազմում էր մոտ յերկու կիլոմետր: Այն օրերին, յերբ նա այդպես ման չեր գալիս, ամբողջ արյունը գլուխն էր խփում:

Կալանատունը միմիայն բանտ չեր: Այն ուրիշ ֆունկցիաներ էլ էր կատարում. այստեղ ձաղկում էյին ճորտ ծառաներին, վորոնց այդ նպատակով ուղարկում էյին տերերը: Նրանց այստեղ ձաղկում էյին կալվածատերերի հանձնարարությամբ: Այն, ինչ վոր դատապարտներում կատարում էյին ախոռներում, մայրաքաղաքում կենտրոնացված էր: Տուրգենևիվ բախտ չուներ: Նրա սենյակը գտնվում էր այն սենյակի կողքին, վորտեղ կատարվում էր այդ եկզեկուցիան: Չայներն այնտեղից բոլորովին պարզ լը-

վում էջին: Իր ամբողջ կյանքում նա պահեց ճիպոտ-
ներէ շրփոցի, ձողկվողներէ ճիշերի և անքոցներէ
հիշողութունը: Ստիպված եր այդ ձայներէ տակ աշ-
խատել, վորովհետև նա սկսել եր գրել: Այստեղ, կա-
լանքի տակ, կալանատանը նագրեց «Մումու» պատմը-
վածքը:

Տանջալից որերն անցնում էին մեկը մյուսի հե-
տեվից: Շուտով բոլոր յերեսունն ել անցան: Մայիսի
16-ին նրան ազատեցին: Յերկու որ հետո, մայիսի
18-ին Ս. Պետերբուրգի գեներալ — նահանգապետը
հայտնում եր գեներալ Դուբելտին. «Ս. Պետերբուր-
գում ապրող Որյոլի նահանգի կալվածատեր Իվան
Տուրգենևը մի ամիս նստեց կալանքի տակ և մայի-
սի 18-ին աքսորվեց իր ծննդավայրը»:

Ա Ք Ս Ո Ր Ո Ի Մ

Ամեն անգամ, յերբ նա մոտենում եր իր հարա-
զատ վայրերին, հուզմունքը համակում եր նրան:
Դա իրեն համար ել անբացատրելի յեր: Բավական եր,
վոր բարձրանար բարձր սարը, վորտեղից բացվում եր
Մցենսկի տեսարանը — նրանից մինչև Սպասսկոյեն
հեռու չեր — և նրան համակում եր մի ուրախ զգա-
ցում: Լի կրճքով նա շնչում եր հարազատ տափա-
տանի ողբ:

Գյուղում նա մի ուրախութուն ուներ, վորը
գոնե վորոշ չափով հաշտեցնում եր նրան հարկադըր-
ված այն եղ ապրելու հեռանկարի հետ, — դա վոր-
սորդութունն եր: Պատանեկական տարիներից նա
մոլի վորսորդ եր: Վորսորդության համար նա պատ-
րաստ եր մոռանալ մնացած բոլորը:

Նա Սպասսկոյե յեկավ հունիսի սկզբին: Ամսի
վերջին սկսվում ե ինքնամոռացության հասնող վոր-
սորդութունը: Նա վորսորդական եքսկուրսիաներ ե
կատարում տանից հարյուր հիսուն վերստ հեռավորու-
թյամբ, հարևան նահանգները: Այդպես տեվում ե սին-
չել հոկտեմբեր: «Այս տարվա ընթացքում յես մենակ
իմ հրացանով սպանել եմ 304 հատ, — գրում ե նա
Ակսակովին, — այն ե՝ 69 ձիահավ, 66 ձահակացար,
39 լուհավ, 33 մորեկ, 31 կաքավ, 25 լոր, 16 նա-
պաստակ, 11 ջրահավ, 8 շամբահավ, 4 բաղ, 1 ջրա-
կացար, 1 կացար: Այս թվերը մեծ են թվում, բայց յե-
թե նկատի առնենք, թե վորքան շատ և հեռու եմ ման
յեկել, չի կարելի ասել, թե յես հաջող վորս եմ արել»:

Հոկտեմբերին սկսվեցին աշնանային, հետո ել
ձմեռային բուք ու բորանը, և վորսորդության վերջն
յեկավ. «Բամին այնպիսի գեղգեղանքներ ե դուրս
բերում, վոր յերբեմն անհնարին ե ախմաչից չբացա-
կանչել. թուհ, ինչ վատ ու ձանձրայի յե, և ցուրտ
ու անդուր յերկրիս վրա աղբելը... Հարկավոր ե թար-
մանալ և մտածել այլ բանի մասին»:

Նա աշխատանքի յե ձեռնարկում: Սպասկոյեյում
կար բավականին աչքի ընկնող գրադարան: Հիմնված
դեռ ևս Լուսավիճողների ձեռքով, այն հետո լրացվում
ե Վարվառա Պետրովսայի և իրեն Տուրգենևի ձեռքով:
Նա այստեղ փոխադրեց Բելինսկու գրադարանը: Մեծ
քննադատի մահվանից հետո նա այն գնել եր: Այժմ
այստեղ կար հինգ հազար հատորից ավելի: Նա յե-
ռանգով կարգում եր: Յերկար ժամանակով նա խորա-
սուզվում ե տարիգրութուններէ ընթերցանության
մեջ: Ընթերցանությանը հետեվում ե գրական աշխա-

տանքը: «Յես դեռ չեմ մեռել,—գրում ե նա Պետեր-բուրգ,—բայց խորը միայնությունը, վորի մեջ յես ապրում եմ, ինձ վորոշ հասկացողությունն ե տալիս այն լուռության մասին, վոր մեզ սպասում ե դերեզմանում: Ասենք, յես չեմ գանգատվում: Յես վոչ մի վայրկյան ձանձրույթ չեմ գգացել, աշխատում եմ և կարդում»:

Այդպես անցնում ելին որեր և ամիսներ:

Գարնան բացվելով կյանքի խաղաղ ընթացքը խանգարվեց մի անսովոր դեպքով: Արդեն տարվա սկզբին Պետերբուրգում Իտալական ուպերայում դաստ-րոյներ եր տալիս Պոլինա Վիարզոն: Արդեն յերեք տարի յեր նրանք չեյին տեսնվել: Պետերբուրգից նրան գրում եյին նրա առաջ բերած Ֆուրորի մասին: Նա իր ամբողջ հոգով ձգտում եր այնտեղ, բայց մեկնելու թույլտվությունն ստանալու մասին մտածելն ավելորդ եր: Նույնիսկ հարեվան կալվածքներն ու Տուլա քաղաքը մեկնելու իր խնդրանքին նա մերժում ստացավ. «Սպասել, տեսնելու համար, թե նա իրեն ինչպես ե պահում»,—գրել եր ժանդարմների շեֆ կոմս Որլովը: Մարտ ամսին նրա և Վիարզոյի միջև տարածությունն ավելի փոքրացավ—նա յեկավ Մոսկվա: Նոր միջնորդությունն հարուցելն անողուս եր: Յեվ սակայն մարտի 20-ին նա փոստալին ճանապարհով ծածկասայլակի մեջ ցնցվելով սլանում եր Մոսկվա: Նա իր գրպանում ուներ մի ինչ վոր վաճառականի անունով կեղծ անցագիր: Ուրիշ յեկը չկար: Նա վճուց ալը վտանգավոր քայլն անել: Յերկու որ հետո կեղծ վաճառականը մոտենում եր «սպիտակափայլին», վորտեղ մոտ մի տարի չեր յեղել Բարե-

կամները զարմացած և վախեցած ելին: Նա շատ բան եր վտանգի յենթարկում: Բայց ամեն ինչ հաջող վերջացավ: Մի շաբաթի չափ մնալով Մոսկվայում՝ նա ապրիլի սկզբին վերադարձավ տուն:

Ապրիլի 16-ին, իր ձերբակալման տարեդարձին Տուրգենևը խնդիրք գրեց թագաժառանգին. քայքայված անողջությունը պատճառ բռնելով, նա խնդրում եր թույլ տալ մայրաքաղաք վերադառնալ: Այնուամենայնիվ խնդիրքն ընկավ ժանդարմների շեֆի ձեռքը: Նա խնդիրքի վրա գրեց. «շուտ ե»: Նշանակում ե, ստիպված եր մնալ Սպասկոյեյում:

Նորից սկսվեց կալանքի խաղաղ հոսանքը: Նա ցերեկն աշխատում եր, իսկ յերեկոյան լերաժշտություն լսում: Նվագում եյին Սպասկոյեյի կառավարիչ, նրա բարեկամ Տյուլաչևի կինը և կնոջ քույրը. «Բեթհովենը, Մոցարաբը, Մենդելսոնը և Վեբերը մեր սիրելիներն են»: Յեվ նորից շատ ժամանակ նվիրում ե վորսորդության: Յերբեմն լուհավ խփելու համար նա գնում եր հարյուր հիսուն վերստ հեռու: Հունիսին նրան այցելեց բանաստեղծ Ֆեալը, վորի հոր կալվածքը Սպասկոյեյի հեռու չեր, կարգում եր Հորացիոսի ողաների սքանչելի թարգմանությունները: Ամառվա վերջին Սպասկոյեյից Տյուլաչևի մեկնելու կապակցությամբ, նա անտեսական գործերով ստիպված յեղավ գյուղերը շատ ման գալ: Դա քիչ ժամանակ չեր լսում, բայց և լավ կողմ ուներ. «Յես աշխատում եմ վոչ մի առիթ բաց չթողնել ամեն կերպ զավառական կյանքից ոգուտ քաղելու համար: Յես բազմաթիվ նոր մարդկանց հետ ծանոթացա և ժամանակակից կենցաղին և ժողովրդին ավելի մոտեցա»:

Նորից մոտենում էր աշունը իր չար բուքերով և վառ յեղանակներով: Նա նորից սկսում է դիմել վերադարձի համար: Հոկտեմբերին նա խնդիրք է գրում Դուբելտին, նոյեմբերին՝ Որլովին: Պետերբուրգում նրա համար հոգում են ազդեցիկ բարեկամները: Դա վճռեց գործը: Նոյեմբերի 14-ին Որլովը թագավորին ղեկուցագիր ներկայացրեց Տուրգենևին գյուղից դուրս գալու և յերկու մայրաքաղաքներում ապրել թույլ տալու մասին: Թագավորը մակագրեց. «Համաձայն եմ, բայց ամենախիստ հսկողութան տակ առնել»:

Դեկտեմբերի 9-ին նա արդեն Պետերբուրգումն էր:

ՂՐԻՄԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ.

Նրան բարեկամները դիմավորեցին աղմուկով և ուրախությամբ: «Современник»-ի խմբակն էր վերադառնում նրա ամենաակնազարկ անդամը: Այստեղ ելին Նեկրասովը և նրա խմբագրակիցն ամսագրի զծով Պանանը, մի թեթևամիտ մարդ, վոր ամենալուրջ հարցերում անգամ ընդունակ էր ըմբռնել միայն «վերնաձայրերի կատարները, բայց և միաժամանակ՝ բարեհոգի և բարի: Իր խիստ ուլալած շապիկի կուրծքը ձեռնկլով, նա բացականչում էր. «Ձե վոր յես հառաջանքով մարդ եմ»: Այստեղ ելին Աննենկովը, գրականագետ, վոր աչքի յեր ընկնում ստույգ և նուրբ ճաշակով, մի զգուշավոր և չափավոր մարդ. «Библиотека для чтения»-յի ապագա խմբագիր Իրոսիինը, «Թշվառ Անտոնի» և «Գյուղի» հեղինակ Դրեգորովիչը: Մոսկվայից այցելում էր խմբակի բոլոր մասնակիցների բարեկամ, անցյալում Բեկինսկու մոտ բարեկամ, Բոտկինը: Խմբակի սովորական մասնակից Դոն-

չարովն այդ ժամանակ «Պալլադա» ֆրեզատով¹ աշխարհի շուրջը ճանապարհորդություն էր կատարում:

«Современник»-ի խմբագրությունն ի պատիվ Տուրգենևի հանդիսավոր, առատ ու աղմկալից ճաշկերույթ տվեց: Իրան հաջորդեցին ուրիշները: Կյանքը մտավ իր ընթացքի մեջ:

Այնինչ Ռուսաստանը տագնապալից և ծանր ժամանակներ էր ապրում: Կառավարութունը յերկիրը նետել էր պատերազմի մեջ, վորին պատրաստ չէր: 1853 թ. աշնանը Թյուրքիայի դեմ սկսած պատերազմը առաջ բերեց պատերազմ ամենահոոր պետութունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից: Իսկույն և յեթ չեքեվան յեկան բանակում տիրող անկարգիւթյունները: Այն յերկրում, վորտեղ զորանոցն առաջին տեղն էր բռնում, բանակն անզոր դուրս չեկավ: Ամեն ինչ հրաշալի յեր զորահանդեսների համար և բոլորովին բանի պետք չէր պատերազմի համար: Զորքը վատ էր զինված և վատ հագնված: Վառուղը պակասում էր: Զորքը վատ էր մատակարարվում վոչ միայն ուղիղապարով, այլ և ուտելիքով: Բոլոր ողակներով բացվեցին աղաղակող թալանն ու կողոպուտը: Լկտիացած ինտենդանտները թալանում էյին զինվորներին ամեն տեղ, վորտեղ վոր միայն կարողանում էյին: Բանակն այդպիսի պայմաններում պիտի կովեր լավ զինված հակառակորդի դեմ: Զինվորի հագուստ հագած հազարավոր ճորտ դուրաքիններ իրենց արյունով ներկում էին Իանուրի ափերը, Կովկասյան լեռների ճյուղավորումները, իսկ

¹ Յեակայմ առագաստավոր մարտանավ: - Մ. Թ.

ավելի ուշ — Սևաստոպոլի բերդի բաստիոնները:

1855 թ. փետրվարի 18-ին ռուսաց բանակի Ղրիմում կրած անհաջողութունների ամենաթունդ ժամանակ, մեծավ Նիկոլայ I-ինը: Նրա մահը կարծես ընդգծում էր այն սխտեմի փլուզումը, վոր նա գլխավորում էր յերեսուն տարի շարունակ: Այդ մահն ընդունվում էր, վորպես ավարտուն ռուսաց պատմության ամենատխուր դարաշրջանի, վորպես նոր դարաշրջան սկսվելու հույս:

Նրա մահվան լուրը տարածվեց քաղաքում այն ժամանակ, յերբ դեռ ևս պաշտոնական տեղեկություն չկար: Տուրգենևն այդ մարդուն ատում էր: Նույնիսկ շատ տարիներ անց միայն նրա անունը տալիս նա գունատվում էր և դեմքի գույնը փոխում: Մի տարի հետո նա այսպես էր բնութագրում նրան. «Մահմանափակ և դաժան, նա իր բնությամբ իսկական վստիկանական ազնիւ էր...» Տուրգենևն այժմ չէր հավատում, թե նա մեռել է: Տանը նստել չէր կարողանում: Նա դուրս վաղեց փողոց: Հասավ մինչև Չմեռային պալատը — այնտեղ ամբոխ էր հավաքված: Ո՞ւմ հարցնեք Վորպես արձան մի զինվոր կանգնած էր պահի: Նա մոտեցավ նրան.

— Ծիջոտ է, վոր թագավորը վախճանվել է:

Նա միայն ծուռ նայեց նրան, բայց չպատասխանեց: Նա հարցը կրկնեց.

— Ծիջոտ է արդյոք:

— Ծիջոտ է, անցեք, — վերջապես պատասխանեց նա կտրուկ և մռայլ:

Բայց նա դեռ չէր հավատում:

— Ծիջոտ է արդյոք, — շարունակում էր նա հարցեր տալ:

— Յեթե այդպիսի բան ասեյի և ճիշտ չլիներ, ինձ կկախեյին:

Դա համոզեցուցիչ էր հնչում: Յեթե իր բարեկամներին վորեւէ մեկն իր մոտ լիներ, նա կնետվեր նրա գերկը:

1856 թ. հուլիսին Տուրգենևն նորից արտասանման գնաց: Նա այդ վաղուց էր ցանկանում: Հաշտություն կնքելուց հետո այդ հնարավոր դարձավ: Հաշտությունը կնքվեց մարտին՝ Ռուսաստանի համար ծանր Փարիզյան խաղաղությունը:

Նա գնում էր ծովով, ինչպես յերբեմն, իր առաջին ճանապարհորդության ժամանակ: Բայց վորքան նա այժմ հեռու յեր խնդուն հույսերով լի այն պատանուց, վոր այդ ուղին կտրում էր 1838 թվին: «Վոչ միայն առաջին և յերկրորդ, այլ յերրորդ յերտասարդությունն» արդեն անցել են... Յետեվն էր մնացել կյանքի մի ավարտված շերտ: Նրա ստեղծագործական զարգացման մեջ այժմ նոր ետապ էր սկսվում: Այդ տարին լույս տեսավ նրա առաջին վեպը՝ «Ռուզինը», վոր գրել էր 1855 թ. ամառը, Սևաստոպոլի սոսկալիում բակոնության ամիսներին: Նորավեպի վրա աշխատելու շրջանը, «հին յեպանակի» շրջանն ավարտված էր: Սկսվում էր խոշոր յերկի, վեպի վրա աշխատելու նոր շրջան: Այս ճանապարհորդությամբ նրա անձնական կյանքումն էլ նոր ետապ էր սկսվում: Նա և ուրախ էր դրանով և տարակուսանքներով լի: «Իմ տարիքում արտասանման մեկնել՝ նշանակում է իրեն բերքում արտասանման մեկնել՝ նշանակում է իրեն վերջնականապես մատնել գնչուական կյանքի և դեն ձգել ընտանեկան կյանքի ամեն մի միտք», — այդպես էր նա գրում մեկնելուց առաջ:

Նրա կյանքի նոր սկսված շրջանը զուգադրյալեց
ոռու հասարակական զարգացման նոր շրջանին, վոր
սկսվել էր Ղրիմի կամպանիայի ավարտումից անմի-
ջապես հետո:

Շոգենավը նրան Շտետտին էր տանում... Բարե-
կամներից նա բաժանվեց ջերմությամբ: Նեկրասովը
նրան ձանապարհ դրեց վոտանավորով:

Прощай! Завидую тебе—

Твоей поездке, не судьбе...

Ты счастлив. Ты воскреснешь вновь;

В душе твоей проснется живо

Все чем терзает прихотливо

И награждает нас любовь...

(Գնաս բարև: Նախանձում եմ — քո մեկնելուդ,
վնչ բախտիդ... Յերջանիկ ես: Կվերածնվես նո-
րից, և քո հոգում կարթնանա վառ բոլորն, ին-
չով սերը մեզ տանջում է ու վարձատրում քմա-
հաճ...):

ՄԱՍՆ ՉՈՐՈՐԴ

ՌԵՅՈՐՄԻՑ ԱՌԱՋ

1857/58 թ. ձմեռը Տուրքենեն ապրում էր Հոռ-
մում: Համարյա քսան տարի լեր անցել այն որից,
յերբ նա այստեղ էր Ստանկևիչի հետ: Այդ ժամանա-
կամիչոցում՝ 1855 թվին մեռավ Գրանովսկին: Մե-
ռավ Բեկինսկին — 1848 թվին: Բակունինը, վոր ընտ-
րել էր հեղափոխականի ուղին, անցավ գերմանա-
կան և ավստրիական բանտերով և այժմ նստած էր
Շլիսելբուրգյան բերդում:

Այս անգամ Տուրքենեն այստեղ էր վ. Պ. Բոտ-
կինի հետ: Նորից, ինչպես յերբեմն Ստանկևիչի հետ,
նրանք հեռավոր դրոսանքներ ելին կատարում հավի-
տենական քաղաքի շրջակայքներում, յերկար ժամեր
անցկացնելով հոռմեական «կախարդական վեհապանձ»
բնության մեջ: Անկարելի յեր հնտարբեր մնալ դեպի
մշտադալար կաղնիները, հովանոցածեղ իտալական
սոճիները, նոճիները, ձիթենիները, բաց — յերկնազույն
լեռները, վոր յերեվում էյին հեռվում, դեպի արա-
սովոր գեղեցկությունը, վոր տարածվում էր «կա-
խարդական — թափանցիկ շղարշի նման»: Չնալած
ձմեռային ամիսներին, յերկնքի և յերկրի վրա ամեն

որ «ինչ վոր լուսավոր տոն» եր կատարվում: Նրանք «դարձանալի որ են անցկացնում villa Pamfili»-յում, մի ուրիշ անգամ մտնում են villa Madama — «մի կիսակործան և լքած շինություն, վոր շինված եր Ռաֆայելի նկարներով»: Յեվ «այդպեսի դիտումներեց վսեմանում ե հոգին — և ավելի մաքուր, և ավելի քննքույշ են հնչում նրա մեջ գեղարվեստական լարերը...»

Բայց և այնպես այդ գեղեցկությունները նրան իր ձուլը հոգեկան վիճակից դուրս չբերին. «Յես կարող եմ միայն համակրել կյանքի գեղեցկությանը — ապրել, սակայն, յես չեմ կարող: Սե քոչն ընկել ե վրաս ու փաթաթել ինձ. չեմ կարողանալու իմ ուսերից դեն նետել այն»:

Այդ վիճակը հետեւյալնք եր անցյալ տարվա Փարիզում անցկացրած իր համար ծանր ձմեռվա: Անձնական բախտով չբավարարվելու հետեւյալնքով ընկճված հոգեկան վիճակն ավելի յեր ծանրանում նրան ամբողջ ձմեռը տանջող հիվանդությամբ: Նա յեկավ Հոռոմ, վորպեսզի ազատվի այդ «մրուրից» և սկսի աշխատել: Բայց Հոռոմում հիվանդությունը նորից սկսեց նրան «կրծել»: Յեվ դա աղբում եր և՛ աշխատանքի և՛ հոգեկան վիճակի վրա:

Մինչ այդ Ռուսաստանից արտասովոր լուրեր եյին գալիս. ճորտատիրության ուժգնությունը պաշտոնապես հաշտարարված եր: Արիմի կամպանիայից հետո, վորը չափազանց ցայտուն կերպով ցուցաբերեց նիկոլակյան ուժի մի սնանկությունը, կառավարությունն ստիպված եր կանգնել ուժգնության ճանապարհի վրա: 1857 թ. աշնանը հայտարարվեցին ճորտատիրական իրավունքի առաջիկա վերացման առաջին պաշտոնա-

կան ակտերը: Ազնվական շրջաններում նրանք հակա-յական հուզմունք առաջացրին: «Նավը շարժվեց, և մենք գլուխներս կորցրինք», — գրում եր Տուրգենին Ս. Տ. Ակսակովը: «Յերկու հրովարտակ և յերորդը նույն բանի մասին... մեր ազնվականության մեջ առաջ բերին չլսված տաղնապ, — Հոռոմից գրում եր Տուրգենինը Գերցենին Լոնդոն: — Արտաքին պատրաստակամության տակ թագնված եր ամենաբուլթ համառությունն ու վախը և ամենազոռ ժլատությունը. բայց այժմ արդեն յես գնալ չեր կարելի — le vin est tiré, il faut le boire»¹: Ազնվականության լիբերալ մասը ցանկանում եր վերացում ճորտատիրական իրավունքի, վորը խանգարում եր յերկրի կապիտալիստական զարգացմանը: «Յես ձեզ չեմ ասի, թե այս բոլորը վճռան ուժեղ ե ազդում ինձ վրա... — գրում եր Տուրգենինը Հոռոմից Լ. Ն. Տոլստոյին: — Վաղուցվա սպասվածը կատարվում ե — և յես յերջանիկ եմ, վոր ապրեցի մինչև այս որերը... Հավատացնում եմ ձեզ (վոր ուժգորմի հարցն) այստեղ մեզ համարյա թե ավելի յե զբաղեցնում, քան ձեզ բոլորիդ, վոր տեղումն եք գտնվում. ամեն մի լուր ընդունվում ե ազահությամբ, իսկ ասեկոսներին և վեճերին ծայր չկա»:

1857/58 թ. ձմեռը Հոռոմում անցկացնող ոռուսների խմբակի մեջ միտք ծագեց հիմնել ամսագիր, վորը պետք և ոժանդակեր կառավարությանը ուժգնության անցկացնելու գործում՝ լուրեր եյին պատվում թե կարվածատերերն ու ազմիրիստարացիայի բարձր շրջանները ուժգորմին դեմ եյին գնում: Նախագծի բո-

¹ Գինին բացված և, պետք ե այն խմել:

վանդակությունը շարադրող գրությունը հանձնարար-
վեց Տուրգենևին: 1858 թ. հունվարին «Տնտեսական
ուղեցույց» ժուռնալի հրատարակման մասին գրու-
թյունը կարդացվեց խմբակի հավաքույթներից մե-
կում, հավանություն տրվեց և ուղարկվեց Ռուսաս-
տան «բարձրագույն իշխանությանց ի քննություն»:
Նախագիծը բոլորովին չիրականացավ: Իշխանություն-
ները գտան, վոր այդ դեռ «վաղաժամ է»:

Այժմ արդեն այլևս արտասահմանում մնալ չեր կա-
րելի: «Մայիս ամսին հույս ունեմ գալ գյուղ,— գը-
րում ե Տուրգենևը Ռուսաստան,— և այնտեղից չեմ
մեկնի, մինչև վոր չկարգավորեմ իմ հարաբերու-
թյունները գյուղացիների հետ: Գալիք ձևերը, յեթե
աստված տա, յես կլինեմ հողատեր, բայց արդեն վոչ
կալվածատեր և վոչ ել բարին»:

Յե՛վ իրոք նա հունիսին արդեն Սպասսկոյեցու մե-
կու: Սեպտեմբերի սկզբին Տուրյուում տեղի ունեցող կալ-
վածատերերի համագումար Տուրյուի ազնվականու-
թյան կողմից գյուղացիական սեփորմը նախապատ-
րաստող տեղական կոմիտեյի պատգամավորներ ընտ-
րելու համար: Ընտրություններից առաջ հարյուր
հինգ ազնվական — հողատերերի կողմից աված դեկ-
լարացիայի տակ, վորով նրանք անհրաժեշտ էին
գտնում «ազատել գյուղացիներին, տալով նրանց
վորոշ քանակությամբ հողաբաժին, վորպես ժառան-
գական սեփականություն» (վորի համար կալվածա-
տերերը «ստանային լրիվ, բարեխիղճ դրամական վար-
ձատրություն»), ալ ստորագրությունների հետ կա՛ն
հետևյալ ստորագրությունները.

Չերնսկի կալվածատեր
ԻվԱն ՏՈՒՐԳԵՆԵՎ
Կրասնովնսկի կալվածատեր
ԿՈՄՄ ԷՆՎ ՏՈՂՍՏՈՅ

Հարյուր հինգ ստորագրությունների մեջ Չերն-
սկու կալվածատեր Իվան Տուրգենևի ստորագրու-
թյունն ըստ կարգի յերկրորդն է:

Դեռ ևս Հոտմում նա սկսեց աշխատել մի նոր
վեպի — «Дворянское гнездо»-յի վրա: Այդ վեպը նա
վերջացրեց աշնանը, Սպասսկոյեցում: 1859 թ. հուն-
վարին «Дворянское гнездо»-ն տպագրվեց «Совре-
менник»-ում: Բարեկամները, վորոնց նա վեպն առա-
ջուց կարդացել էր, նրան «ովացիաներ» էին գուշա-
կում: Սակայն հաջողությունը գերազանցեց բոլոր
սպասելիքները: Այդ հաջողությունը հսկայական էր,
ընդհանուր, բացառիկ: Տուրգենևի, վորպես խոշորա-
գույն գրողի, հուշակը վերջնականապես ամրացավ:
Փառքն ու ուշադրությունը շրջապատում էին նրան
ամեն կողմից: Ամեն տեսակի հուշակավոր անձինք աշ-
խատում էին նրա հետ ծանոթանալ: Յերիասարդ
գրողներն իրենց գրվածքները բերում էին նրան և
նրա դատավճռին էին սպասում: Աշխարհիկ սալոն-
ներից հրավերներ էր, վոր թափվում էին: Մի տա-
րի անց նույնիսկ Գերցենը իր լոնդոնյան «КОЛОКОЛ»
ամսագրում նրան անվանեց «ժամանակակից ողուս մե-
ծագույն ուրվեստագետ»: «Յես ամաչում եմ, և դրան
հավատալ չեյի կարող, բայց ինձ հաճելի յեր այդ»,—
գրում էր Տուրգենևը Գերցենին:

Նա չտեսնված ստեղծագործական վերելքի շրջան
էր ապրում: «Дворянское гнездо»-յից անմիջապես

հետո, — դեռ նրա լույս տեսնելուց մի ամիս ել չէր անցել, — նա սկսում է մշակել նոր «Նախորդակին» վեպի պլանը: Բավական հոգնեցուցիչ աշխատանք է, մանավանդ վոր այն վոչ մի տեսանելի հետք չի թողնում. քեզ համար պառկում ես բազմոցի վրա կամ քայլում սենյակում և գլխումդ վորեք բնավորութուն կամ դրութուն է շուռ ու մուռ գալիս — մեկ ել տեսնում ես, վոր յերեք, չորս ժամ անցավ, բայց, կարծես, շատ չես առաջ գնացել»: Նա այդ վեպն սկսում էր գրել արտասահմանում, Վիշիում, մի փոքրիկ ֆրանսիական քաղաքում: Այնտեղ ծաղիկոլ լորիների քաղցր բուրմունքը նրան հայրենիքն էյին հիշեցնում, բայց այնտեղ չկային նրա «անծայր դաշտերը, ոչինդրները արտերի միջնակներում, լճակներն ուռենիներով և այլն»:

Վիշիից նա շտապում է Վիարդոների ամբողջը, Կուրտաֆելել, վորի հետ այնքան հիշողութուններ էյին կապված: Նա այժմ շարունակ զբաղված է իր չերկով, նույնիսկ այն ժամանակ, յերբ վոչինչ չի աշխատում. «Յես անդադար զբաղված եմ իմ գործող անունում. «Յես անդադար զբաղված եմ տեսնում»: Այնուամենայնիվ նա այստեղ նորից տխուր տրամադրութուններով էր համակված, վոր առաջացել էյին անձնական բախտի անհաջողության միշտ նույն զգացումով. «Նստած եմ լուսամուտի առաջ, վոր պարտեզին է նայում... Չորս կողմս ամեն ինչ շատ խաղաղ է. լսվում են մանկական ձայներ և քալեր (տիկին Վիարդոն սքանչելի յերեխաներ ունի) — պարտիզում զուեղունում են վայրի աղափխներն ու շիկանափն և յերգում, քամին փչում է դեմքիս — և սիրտս համար-

յա թե ձերության թախիծն է պատել: Ընտանիքից և հայրենիքից դուրս չկա յերջանկութուն, ամեն մեկը թող նստի իր բնում և թող արմատները խրի իր հայրենի հողի մեջ: Ինչո՞ւ կպչել ուրիշի բնի յեզրին»: Վեպն ավարտվում է արդեն Սպասկոյեում, աշխանը:

«Նախորդակին» վեպն ավարտելու ժամանակ, ինչպես և առաջ «բոլոր մտածումների, բոլոր խոսակցութունների միակ առարկան» գլուղացիական հարցն էր: Վեպն ավարտվեց այն ժամանակ, յերբ ցայտուն կերպով գծվեց տարածայնութունը լիբերալ ազնվականության բանակի, վորին պատկանում էր Տուրգենևը, վոր «աստիճանական» էր, մի մարդ, վոր «ոեֆորմներն սպասում էր միայն ի վերուստ» և հեղափոխական դեմոկրատների շրջանների միջև, վորոնք կողմնորոշվում էյին դեպի գլուղացիական հեղափոխութունը: Նրանց իդեոլոգներն էյին Ն. Գ. Չերնիշևսկին և Ն. Ա. Դոբրոլյուբովը: Դեռ ևս հիսունական թվականների կեսերից Չերնիշևսկին, հետո էլ Դոբրոլյուբովը դառնում են «Современник»-ի աշխատակիցներ: Հիսունական թվականների վերջերին ամսագրի գաղափարական ղեկավարութունը վերջնականապես անցնում է նրանց ձեռքը: «Современник»-ի եջերից Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը վճռականորեն հարձակվում են լիբերալ — ազնվականության բանակի վրա, վոր պաշտպանում էր մասնակի ոեֆորմների, կարվածատիրական տնտեսության խաղաղ եվոլյուցիայի ուղին դեպի կապիտալիզմը: «Современник»-ի հին աշխատակիցները հեռանում են ամսագրից: «Նախորդակին» վեպը Տուրգենևը տալիս է «Русский вест-

ник»-ին: Իր հետեւյալ պատմվածքը «Առաջին սերը» նա սպաղրում է «Библиотека для чтения»-յում: Խզումը «Современник»-ի հետ դառնում է կատարված փաստ: Չերնիշևսկին նրա մասին հայտարարում է ժողովում: «Մեզ սկսեց թվալ, թե Տուրգենևի վերջին պատմվածքներն այնքան ել մոտ չեն համապատասխանում իրերի մասին մեր ունեցած հայացքին, ինչպես առաջ, յերբ և՛ նրա ուղղությունը մեզ համար այնքան ել պարզ չեր, և՛ մեր հայացքներն այնքան պարզ չեյին նրա համար: Մենք բաժանվեցինք: Այգպէս է արդո՞ւր: Վկա յենք բերում իրեն Տուրգենևին»:

1861 թ. փետրվարի 19-ի մանիֆեստի լուրը, վոր հայտարարում էր ճորտատիրական իրավունքի վոչընչացումը, նրան հասավ Փարիզում: Լիբերալ ազնվականության ամբողջ բանակի հետ միասին Տուրգենևը վողջունում է այդ սկտը:

Իրավաբանորեն գյուղացիներն ազատվեցին կալվածատերերի իշխանությունից: Սակայն այն սկզբունքները, վորոնցով ռեֆորմն անցկացվեց, գյուղացիությանը դեպի կործանումն էյին տանում: Տուրգենևը շուտով կարող էր այդ բանում համոզվել:

ԲԱՊԵՆ — ԲԱՊԵՆ

1852 թ. դեկտեմբերյան հեղաշրջումից հետո, վոր Ֆրանսիան հայտարարեց կայսրություն, յերկրից սկսվեց եմիգրացիա: Հանրապետականները, Նապոլեոն III-ի թշնամիները, վորն իրեն կայսր էր հայտարարել, հայրենիքից հեռանում էյին: Նոր կայսրության մեջ հաստատված անտանելի ռեժիմը Վիարդուի ընտանիքին նույնպես ստիպեց 1863 թ. թողնել յերկիրը:

Պոլինայի ամուսինը, Լուի Վիարդոն հանրապետությունը վոչնչացնող դեկտեմբերյան հեղաշրջման յերջրվյալ թշնամին էր: Այդ տարվա գարնանը նրանք տեղափոխվեցին Բադեն-Բադեն, Բադենի գերմանական դքսության մի փոքրիկ քաղաք, վոր համարյա Ֆրանսիական սահմանի վրա յե գտնվում: Ֆրանսիական հեղափոխության ժամանակներից Ֆրանսիական վտարանդիներն այստեղ էյին ընակություն հաստատում: Վորպես հուշակավոր կուրորտ նա ամեն տարի հազարավոր յեկվորներ էր գրավում: Քաղաքը թաղված էր կանաչի մեջ, շրջապատված էր Շվարցվալդի լեռներով: «Այնպիսի ծառեր, ինչպիսիք այնտեղ կան, յես վոչ մի տեղ չեմ տեսել,— գրում էր Տուրգենևը Ֆլորենյին,— և այն ել հենց լեռների կատարին: Դա ուժեղ է, յերիասարդ, բանաստեղծական է ու նրբագեղ և աչքերի և հոգու վրա բարերար ազդեցություն է թողնում: Յերբ նստում ես այդ հսկաններից մեկի ստորոտում, թվում է, թե նրա հյութերի մի մասը փոխ ես առնում»:

Իր բարեկամներից անմիջապես հետո Տուրգենևը տեղափոխվեց այստեղ: Յեթե Վիարդոնների ընտանիքը տեղափոխվեր Ավստրալիա, ասում էր նա հաճախ, յես նրանց հետեւից կգնայի: Վիարդոնների հարեվանությամբ նա գնեց մի հողամաս և սկսեց իր սեփական վիլլայի կառուցումը: Նա շինվում էր միսովբախտ պարտիզում, վոր ճորակով դեռն էր իջնում: Խաղաղ կյանքի տարիները հոսեցին Բադենում: Նա շուտով սիրեց և՛ այդ քաղաքը, և իր կյանքն այնտեղ, Վիարդոնների ընտանիքի կողքին: Այնտեղից մեկնելով,

նա յերազում եր շուտով վերադառնալ իր «Չերմ սիրած» «հարազատ» բուչնը:

Բազենի իր խաղաղ կյանքի ընթացքը խանդարվեց ստիպողական ճամբորդութեամբ Ռուսաստան: Պետերբուրգում III բաժանմունքը բռնել եր Գերցենի, Բակունինի, Ոգարևի նամակները, գրված Ռուսաստանի բարեկամներին, վորոնց մեջ հաճախ հիշվում եր Տուրգենևի անունը: Կազմվեց գործ «Լոնդոնի պրոպագանդիստների հետ հարաբերութիւնն ունենալու մեջ մեղադրվող անձանց մասին»: Տուրգենևը կանչվում եր այդ գործով: Նրան առաջարկվեց գալ Պետերբուրգ սենատական քննիչ հանձնաժողովին ցուցմունքներ տալու: Այն ինչ հենց այդ ժամանակ նա «վերջնականապես բաժանվել եր Լոնդոնի աքսորականներից»: Այն բանավեճում, վոր դրանից քիչ առաջ վարդւմ եյին Տուրգենևն ու Գերցենը, վերջնականապես պարզվեց տարածայնութիւնը հեղափոխական Գերցենի և լիբերալ Տուրգենևի միջև, վոր ժրխտում եր Ռուսաստանի զարգացման հեղափոխական ուղին: «Մեր կարծիքները խիստ տարբերվում են, գրում եր Տուրգենևը Գերցենին, 1863 թ. գարնանը, — ինչո՞ւ իդուր տեղը միմյանց գրգռել:

Բայց նրան կանչեցին ցուցմունքներ տալու: Նորից, ինչպես մի ժամանակ աքսորից, նա նամակ ե գրում — Ալեքսանդր II-ին: Հավաստիացնելով նրան, վոր իր համոզմունքները չափավոր են, «լիովին անկախ, բայց բարեխիղճ», նա խնդրում ե հարցաքննութեան կետերն ուղարկել իրեն, արտասահման: Այդ կետերը նրան ուղարկվեցին, բայց առաջին հրավերին հետեվեց յերկրորդը:

1864 թ. հունվարին նա ստիպված յեղավ ներկայանալ սենատին: Գործը նրա համար լիովին բարեհաջող վերջ ունեցավ, նա ամեն մի պատասխանատվութիւնից ազատվեց և փետրվարի վերջին կարողացավ վերադառնալ Բազեն, իր «հին բուչնը», վորի մասին բացակայութեան ամբողջ ժամանակամիջոցում չեք դադարում մտածելուց:

Վերադառնալուց հետո նրան հայտնի դարձավ այն կծու դիտողութիւնը, վոր Գերցենը տպագրել եր «КОЛОКОЛ»-ում. «Մեր թղթակիցը պատմում ե մի սպիտակահեր Մազթաղի՞նէյի մասին (արական սեռի), վոր գրել եր թագավորին, թե ինքը զրկվել ե քնից և ախորժակից, հագուստից, սպիտակ մազերից և ատամներից, տանջվելով այն բանից, վոր թագավորը, դեռ ևս չգիտե այն զղջումը, վորի շնորհիվ նա խղել ե իր յերիտասարդութեան բարեկամների հետ ունեցած բոլոր կապերը»:

Կյանքը մտավ իր հունի մեջ: Նա կարդում ե, յերաժշտութիւն լսում, աշնան ամիսներին վորսանում, յերբեմն իր Պեդաս շան հետ, վոր ամբողջ Բազենում հոչակված եր իր արտասովոր խելքով և հոտառութեամբ, հեռավոր եքսկուրսիաներ կատարելով:

Իր Բազենի կյանքի առաջին տարիներին նրա գրական գործունեցութիւնը համարյա հանգել եր, Բազեն տեղափոխվելուց մի տարի առաջ լույս տեսավ նրա վերջին խոշոր յերկը. «Հայրեր և զավակներ» վեպը, վոր ինչպես հասարակութեան, այնպես ել քննադատութեան անսովոր ուշադրութիւնն եր գրավել: «Հայրերն ու զավակները» կարգացել եյին նույնիսկ

այնպիսի մարդիկ, վորոնք աշակերտական նստարանից հետո իրենց ձեռքը գիրք չեյին առել»:

Բայց վեպով շատ քչերը բավական մնացին: Դեմոկրատական շրջաններում այն համարում էլին պամֆլետ, իսկ Բազարովի պատկերը՝ լերիտասարդ սերնդի ծագրանկար: Բայց և ազնվականների պեղծությունը շրջաններումն էլ վեպով անբավական էյին: Այստեղ, ընդհակառակը, հեղինակին մեղադրում էյին այն բանի համար, վոր նա չափազանց համակրությամբ և վերաբերվել զեպի «նիհիլիստ» Բազարովը: Տուրգենևեվն ամենախիստ հարձակումների ցեխթարկվեց: Վեպի համարյա ընդհանուր դատապարտության ազդեցության տակ նրա մեջ մտադրութուն և առաջանում գրական գործունեությունից բոլորովին հրաժարվել: «Յես իմ գրիչը մեխից կախեցի... — գրում և նա 1865 թ. սկզբին: — Ռուսաստանն ինձ համար դարձել և ուտար, և յես չգիտեմ, թե նրա մասին ինչ ասեմ: Այդպիսի զեպքերում, ինչպես ասում են, le silence est d'or»¹. Բայց արդեն այդ տարվա վերջին նա իր բարեկամին գրում է, թե «բռնել եմ մի մեծ վեպի պոզերից... Յես այնքան յերկար ժամանակ և չեմ գրել, վոր զգում եմ ներքին վոչ թե հոգնածութուն, այլ վորոշ ալարկոտութուն, վոր չափազանց դանդաղ և անհետանում»: Դա «Մուխ»-ն էր, գրված 1867 թ. մարտին:

Այժմ նա Ռուսաստան հազվադեպ և գնում և այն էլ կարճ ժամանակով, ամեն անգամ յերազելով շուտափուշ իր բաղենյան «բուչնը» վերադառնալու մա-

¹ Լուսթյունը վոսիլի յե:

սին. 1867 թ. դարնանը նա պալիս և Մոսկվա «Մուխ» վեպի տպագրության համար բանակցություններ վարելու նպատակով: «Այն ժամանակվանից, ինչ յես աչտեղ եմ, — գրում և նա Պոլինա Վիարգոյին, — յես չեմ կարողանում ազատվել մի տարորինակ տպավորութունից: Ինձ թվում է, թե յես բանտումն եմ... Միայն ձեր նամակներն են, վոր ինձ համար ազատության լրաբերներն են հանդիսանում: Նրանք ինձ ասում են, վոր 11 որից հետո յես նորից կդառնամ այն, ինչ վոր էյի: Բայց վորքան շատ բան են նշանակում այդ 11 որը: Յես բոպեններն եմ համարում: Ո՛ր, ինչ ձանձրացրել և ինձ այս անվերջ ձմեռը, այն ամենը, ինչ վոր յես տեսնում եմ և այն բոլորը, ինչ վոր ինձ շրջապատում է»:

1868 թ. ամառը գալիս և Սպասսկոյե, վորտեղ յերեք տարի չեր յեղել: Պարտեզը նրան հսկայական թվաց: Բաղենի Tiergarten-ի ամբողջ հովիտը կարող էր նրա մեջ տեղավորվել: Մանկության հիշողությունները համակում են նրան: Նա իրեն տեսնում և փոքրիկ աղա, վոր վաղում և ծառուղիներով: Ահա նա յեղեսի վրա պառկում և ծաղկաթումբերին, զեանաթութ գողանալու համար: Նա ձանաչում և այն ծառը, վորի վրա նստած էր իր սպանած առաջին ագռավը: Այստեղ ամեն մի անկյուն հիշողությունների հետ և կապված: Այնուամենայնիվ նա ձգտում և յետ, զեպի Բաղեն: Սպասսկոյեյի տան հին պատերը «կարծես զարմանքով են նայում ինձ, վորպես մի ոտարականի: Յեվ յես իսկապես էլ, այդպիսին եմ»: Նա խոսում և նախկին ձորաբերի հետ, զանազան կոչումների տեր

մարդկանց հետ, դիտում ե այն, ինչ շրջապատում ե իրեն: Չորս կողմն իշխում ե մի սարսափելի, վախ ազդող աղքատութուն: «Սպասակոյեյում անցկացրածս ամբողջ ժամանակվա ընթացքում, — գրում ե նա Բադեն վերադառնալուց հետո, — յես նմանվում եյի քշված նապաստակի. չես չեյի կարող քիթս պարտեզ հանել, վորպեսզի ծառերի յետևից, թփերի տակից, համարյա թե գետնի տակից ինձ վրա չնետվեյին, չհարձակվեյին՝ սպասավորները, մուսթիկները, մեշչանները, պաշտոնաթող զինվորները, աղջիկները, կնիկները, կուլրերը, կողերը, հարևան կալվածատերերն ու կալվածատիրուհիները, տերտերները, տիրացուները — թե մերոնք և թե ուրիշները, — և բոլորն ելսովից չորացած, սև ազոավի ձագերի նման բերանները բաց, վորտքերի տակ գլորվելով, խանձված ձայներով գոռում եյին. «հաչր, իվան Սերգեևիչ, փրկեցեք, փրկեցեք... մեռնում ենք»: Յես պետք ե, վերջապես, փախչելով ազատվեյի, վորպեսզի ինքս ել առանց վոչնչի չմնայի: Մանավանդ վոր պատրաստվում ե մի սոսկալի տարի. գարնանացանը փչացավ, հաճաքը ծղոտով ահազին ե, բայց հասկի մեջ հատիկներ չկան: Յեզ ինչ պատկեր ե ներկայացնում այժմ Ռուսաստանը՝ այդ ինչպես բոլորն են հավատացնում, այնքան հարուստ յերկիրը: Բոլոր տանիքները մերկացված են, ցանկապատերը քանդված. վոչ մի տեղ մի նոր շինութուն չի յերևում — բացի ողետներից. ձիերը, կովերը՝ սատկած, մարդիկ՝ հյուժված, յերկու կառուպան հազիվ կարողացան բարձրացնել իմ ձամբրուկը: Ամեն տեղ ամպի նման փոշի չե կանգնած... Միայն տեսնում ես մարդկանց, վորոնք փորի վրա յե-

րեսնիվայր ձգված քնած են — ամենուրեք ուժասպառութուն, թուլութուն և անտանելի ցեխ ու չքավորութուն: Պատկերը տխուր ե, բայց ճիշտ»: «Սուրբ Ռուսիան, ծաղկող Ռուսիա չե, — գրում եր նա Պոլինա Վիարդոյին գեռ ևս Սպասակոյեյից: — Ասենք սրբից այդ բանն սպասել ել չի կարելի»:

Յերգելու մեջ կատարելագործվելու համար Պոլինա Վիարդոյի մոտ աշխարհիս զանազան յերկրներից յերգչուհիներ եյին հավաքվում: Այս տանը հյուրասիրութուն եյին դառնում և գերմանական յերաժիշտները, նկարիչները, գրողները և քննադատները: Հաճախակի հյուր եր այստեղ Տուրգենևի հին բարեկամը՝ գերմանացի նկարիչ Պիչը: Այստեղ լինում եյին գերմանացի վիպասաններ: Պոլինա Վիարդոն այժմ հանդես եր գալիս վոչ միայն իր բն յերգչուհի, այլ և վորպես կոմպոզիտոր: Նա չորս ոպերետների համար յերաժշտութուն գրեց: Տուրգենևը նրանց համար գրում եր տեքստը: Դրանք ներկայացվում եյին Տուրգենևի տանը սարքած բեմի վրա: Ներկայացումներից մեկին ներկա եյին Պրուսիայի թագավորը, թագուհին և թագաժառանգն իր ընտանիքով: Պիչին գրած նամակում Տուրգենևը նկարագրում եր իր սպավորութունները. «Պետք ե խոստովանեմ, վոր յերբ չես «փաշայի» գերում պառկած եյի գետնին և տեսնում եյի, թե ինչպես ձեր գոռոզ կրոնպրինցուհու անշարժ շրթներին զանդաղ լսողում եր սառն ծաղրի թեթեվ զզվանքը. — իմ մեջ ինչ վոր բան գողաց: Նույնիսկ դեպի սեփական իմ անձն ունեցած իմ թուլլ հարգանքով, ինձ թվաց, վոր արդեն չափը չափազանց անցավ: Այդ բո-

ըրբով հանդերձ այդ ներկայացումները հաճելի էլին և հրապուրելի»,

Այդպես անցնում էլին ամիսներ և տարիներ: 1870 թվին Բաղենի «բուլնը» հուղվել էր Յեկրոպան ցընցող ահավոր դեպքերով: Սկսվեց Ֆրանսա — պրուսական պատերազմը: Տուրգենևի և Նույնիսկ Վիարդոնների ընտանիքի համակրանքը Պրուսիայի կողմն էր. նրա հաղթանակը պետք է ատելի Նապոլեոնին վճռական հարված հասցնելու: Դեպքերը յերկար սպասել չտվին. «Իրանք արդեն դեպքեր չեն», — գրում է Տուրգենևը Պիչին, — այլ ամպրոպի մեկը մյուսին հետևող հարվածներ — ուշքի չեկած խլանում են բոլորովին: Կաշաբը և 100,000 Ֆրանսիացիներ գերի յեն վերցված: Հանրապետություն: Մի քանի օրից, դուքս, Փարիզն առնվի...»: Նա յերջանիկ է, վոր «բախտ ունեցավ վկա լինելու, թե ինչպես այդ խղճուկ անդգամն իր ամբողջ վատախմբակով գլորվեց Կոյուղին: Ինչ՞ու այդ մարդու հետ այդքան ահնաժանքով են վարվում: Այն ամենն, ինչին նա արժանի յե, — դա վոջիլներին կերակուր դառնալու համար գնալ կայեննա»: Սաղաղության պայմանները կնքելու ժամանակ Տուրգենևը Պետերբուրգումն էր: «Խեղճ Յրանսիա, — բացականչում է նա: — Ինչպիսի սոսկալի հարված և ինչպես պիտի նա նորից վտառի կանգնի: Բոլորը լի յեն համակրանքով դեպի Յրանսիան», — գրում է նա Վիարդոյին, մատնանշելով, վոր այժմ, Բոնապարտի լծից Յրանսիայի ազատագրվելուց հետո, իր զգացմունքները փոխվել են:

Նապոլեոն III այլևս գոյություն չունի: Կարելի յեր Բաղենից հեռանալ:

ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐ

«Մերության ցուրաը որ ավուր ավելի խորն է թափանցում իմ հոգին»:

Տուրգենևի՝ — Յա. Պ. Պոլոնսկու:

1871 թ. աշնանը Փարիզի նեղ և կեղտոտ rue de Douai¹ փողոցի մի փոքր յեռահարկ տան մեջ բնակվեցին նոր կենվորներ: Այդ որվանից առաջին յերկու հարկերի պատուհաններից ամեն որ յերգեցողութուն էր լսվում. կանացի ձայները յերկար ժամանակ միևնույն գեղգեղանքներն էլին կապարում: Վերին հարկում լուսթյուն էր տիրում: Առաջին յերկու հարկերում բնակվեցին Վիարդոնները, վերին հարկում, յերկու փոքրիկ ու ցածր սենյակներում՝ Տուրգենևը:

Նրա կյանքը Փարիզում շատ բանով հիշեցնում էր Բաղենի կյանքը: Որերը խաղաղ հոսում էլին որերի հետևից, առանց աչքի ընկնող դեպքերի, Վիարդոյի ընտանիքի հետ սերտ հարաբերության մեջ, վորի շահերը նա իր սրտին մոտ էր ընդունում: Ռուսաստանն ահա հաղվադեպ էր գնում և կարճ ժամանակով: Բայց հայրենիքում կատարվող բոլոր դեպքերին հետեվում էր ուշադրությամբ, կարգում էր ամեն բան, ինչ վոր այդտեղ լույս էր տեսնում և յեռանդուն գրագրության մեջ էր իր ուսու բարեկամների հետ: Իր՝ Փարիզում անցկացրած տասնումեկ տարվա ընթացքում նա Ռուսաստան գրել է մոտ յերեք հազար նամակ:

Ռուս բարեկամները հաճախ գալիս էլին Փարիզ, և այն ժամանակ այցելում էլին rue de Douai: Ասենք, ուս ալցելուններն այդ տանը սովորական է

¹ Փող. Դուե:

իին: Փարիզում կար ընդարձակ ոռւս գաղութ: Այդ գաղութը գլխավորապէս բաղկացած էր ուսանող յերիտասարդությունից, մասամբ էլ՝ քաղաքական վտանգիւններից: Այդ մարդիկ մեծ մասամբ խիստ կարիքի մեջ էին, յերբեմն էլ միջոցներից բոլորովին զուրկ: Նրանցից շատերն իրենց ուժերը փորձում էին գրականության մեջ: Իրենց ձեռագրերով, խորհուրդ հարցնելու համար, հանձնարարականների համար, լեբբեմն էլ պարզապէս աշխատանք վորոնելու նպատակով նրանք անպայման դիմում էին Տուրգենին: Գալիս էին ծանոթներ և անծանոթներ: Ամեն որ աւաճողները նրա փոքրիկ սենյակներում կարելի չէր հանդիպել ինք — վեց մարդու: Նա նրանց վերաբերվում էր իր սովորական բարությամբ: Մեկի համար աշխատում էր աշխատանք գտնել, մյուսներին՝ կապել ոռւսական խմբագրությունների հետ, հանձնարարական նամակներ էր տալիս: Նա միշտ վորեւ մեկի համար հոգս էր քաշում: Փարիզի վոստիկանութունը, վոր ոռւս լերիտասարդությանը ծուռ աչքով էր նայում, վերջի վերջո սկսեց նրան էլ հետևել: «Յես նրա աչքում նիհիլիտանների իսկական մայրն եմ», — գրում է նա մի նամակում: Այդ ժամանակ նա բարեկամաբար մտերմանում է ոռւս հեղափոխական եմիգրացիայի հայտնի գործիչներին՝ Պ. Լ. Լավրովի, Գերման Լոպատինի, Պ. Ա. Կրասոտկինի հետ:

Միաժամանակ նա մոտենում է Ֆրանսիական գրողներին: Ֆլորերի հետ նա բարեկամությամբ վաղուց էր կապված: Նա մոտենում է Զոլայի, Ե. Գոնկուրի, Դոդեյի, Մոպսսանի հետ: Ամեն ամիս նրանք կազմակերպում են «սուլոցի արժանացած հե-

ղինակների ճաշկերույթներ»: Իրենց գրական կարյերայի ընթացքում նրանցից չուրաքանչյուրը վորեւ բանի համար արժանացել է սուլոցի: Տուրգենը նրանց հավատացրեց, վոր իրեն սուլել են Ռուսաստանում: Այդ հսկա ձերուներն, յերկար արժաթ մագերի խիտ քաշով, բարի խաղաղ դեմքով, մի քունքից մինչև մյուսը խորը ծալքով ակոսված ճակատով, հմայել էր իր Ֆրանսիացի յեղբայրակիցներին: Նա աչքի չէր ընկնում իր խորը և նուրբ խելքով, հսկայական կրթությամբ, գարմանալի պատմողի ձիրքով և միաժամանակ բարեսիրտ նարգությամբ: Ֆլորերը, կարգավոր նրան իր «Испытания святого Антония»-ն, վողկորված գրում է ժորժ Զանդին. «Ինչպիսի ունկնդիր և վսրպիսի քննադատ» Նա ինձ շացրեց իր դատողությունների խորությամբ և հստակությամբ... Վոչինչ նրա աչքից չի խուսափում... «Սուրբ Անտոնիոսի» նկատմամբ նա իրեն նրբությամբ ապշեցուցիչ մի յերկու յերեք դիտողություններ արավ»:

Տուրգենը սքանչելի գլխեր ֆրանսերեն լեզուն: Հոչակավոր պատմաբան Թանն ասում էր, թե Տուրգենի լեզուն XVIII դարի ֆրանսիական սալոնների լեզուն է:

Այս տարիներին, ինչպես և Բադենի կյանքի տարիներին՝ նա քիչ էր գրում: 1876 թ. նա տղազրեց «НОВЬ» վեպը, վոր հղացել էր դեռ ևս 1870 թվին, բայց ավարտել միայն վեց տարի հետո: Նա նախատեսում էր, վոր այդ վեպը հարձակումների առիթ կտա. «Յեթե «Հայրեր ու զավակներ» համար ինձ գավազաններով ելին ձեռում, ապա «НОВЬ»-ի համար ինձ կհարվածեն գերաններով — և ճիշտ նույնպես յեր-

կու կոյմից»։ Վեպը հասարակական մեծ ուշադրու-
թյուն գրավեց և իրոք առաջ բերեց արմատական մա-
մուլի հարձակումները։ Նորից, ինչպես յերբեմն «Հաչ-
բեր և զավակներ»-ից հետո, նա վորոշում է թողնել
գրական գործունեությունը։ «Այս վերջին դասն ինձ
համար զուր չի անցնի. իմ գրական կարյերայն դա-
դարում է ընդմիջում...» «Իմ վճիռն անդարձ է. իմ ա-
նունն այլևս հրապարակ չի գա...» «Ինձ համար նույ-
նիսկ տարրինակ և մտածել,— գրում է նա վորոշ
ժամանակից հետո,— վոր յես մի ժամանակ գրակա-
նագետ եյի»։ Այն մի քանի տողը, վոր նա 1877 թ.
գարնանը գրել է իր որագրում, գծում են նրա հո-
գեկան վիճակի պատկերը. «Կես գիշեր ե։ Նորից նըս-
ած եմ իմ գրասեղանի առաջ... Իսկ հոգուս մեջ խա-
վար գիշերից ավելի խավար ե... Կարծես գերեզմանը
շտապում է կլանել ինձ. որը թռչում է վորպես
դատարկ, աննպատակ, անգուշ։ Նայում ես
նորից ընկիր անկողին։ Չկա վոչ սպրելու իրավունք,
վոչ ցանկություն. այլև անելիք չկա, չկա սպասե-
լիք, նույնիսկ ցանկանալու վոչինչ չկա...»։

Յոթանասունական թվականների վերջերին յերե-
վում են Յեվրոպայում նրա ունեցած ժողովրդակա-
նություն և միաժամանակ հայրենիքում նրա նկատ-
մամբ փոփոխված վերաբերմունքի ապացույցները։
1878 թվին, Փարիզի միջազգային գրական կոնգրե-
սում, վորի նախագահն ընտրված եր Ֆրանսիական
գրականություն նահապետ Վիկտոր Հյուգոն, Տուր-
գենեն ընտրվում է փոխնախագահ։ Հեթո հաջորդ
տարում Ոքսֆորդի համալսարանը նրան ընտրում է
սովորութական իրավունքի ղեկավոր։ Տուրգենեն այդ

համարում է «զարմանքի արժանի գործ», լայց ու-
ղեվորվում է Անգլիա։ «Ոքսֆորդը լես գնացի հաջո-
ղությամբ, շատ բարեհաճ ընդունելության հանդիպե-
ցի, ընդունելության ժամանակ ուսանողներն ինձ
ծափահարում եյին, իսկ պրոֆեսորներն ինձ նվիրե-
ցին այն կարմիր քղամիզը և քառանկյունի գլխաւ կը,
վորով յես այն ամբողջ սրն ի ցույց շրջում եյի— և
վորոնք այժմ կարող են ինձ ծառայել, յեթե
յես մտադրվեմ շարադ խաղալ»։

Ռուսաստանում ընթերցող լայն մասսաների կող-
մից վերաբերմունքը դեպի նա խիստ փոխվեց։ Դա
ցայտուն կերպով արտահայտվեց, յերբ նա 1879 թվի
գարնանը յեկավ Մոսկվա և Պետերբուրգ։ Մեծարանք-
ներին վերջ չկար։ Այդ մեծարումները կառավարական
ըրջաններում լուրջ դժգոհություն առաջ բերին։ Տուր-
գենենին նույնիսկ առջարկվեց հրաժարվել լելւթ
ունենալուց յերկու ուսանողական յեւեկույթներում,
վոր յենթադրվում եյին կազմակերպել։ Անկասկած,
այդ մեծարումները կառավարություն դեմ ուղղված
ցույցեր եյին։ Տուրգենենն այդ բանում իրեն հաշիվ
տալիս եր։ Փարիզ վերադառնալով, նա Գարման Լո-
պատինին պատմում եր. «Չե վոր լես հասկանում եմ,
վոր ինձ չեյին մեծարում, այլ ինձանով, վորպես գե-
րանով, կառավարությանն են խփում։— Տուրգենենը
պերճախոս ժեթով ցույց տվեց, թե ինչպես է այդ
արվում։— Ե՛հ, թող, թող այդպես լինի, յես շատ ու-
բախ եմ»։

1881 թվի ամառվա ամիսները նա անցկացրեց
Սպասկոյեյում։ Այնքան ժամանակ է նա այտո՞ղ
չեր լեղել սկսած իր աքսորից։ Նա մենակ չեր։ Ամ-

բողջ ամառը նրա մոտ հյուրը եր բանաստեղծ Պոլոն- սկին ընտանիքով: Տուրգենևն այստեղ այս ընտա- նիքի մեջ, իրեն հրաշալի չեք զգում: Նորից, ինչպես կես դար առաջ, Սպասսկոյեյի հին պարտեզը լցվեց մանկական ձայներով: Տուրգենևն իր հյուրերին պատ- մում եր այս պարտեզի անցյալը, իր մանկությունը: Այստեղ ամեն մի թփիկ ծանոթ եր նրան: Մի ան- գամ նրանք մինչև լույս զըռոսնում եյին: Յերը թըռ- չուններն սկսեցին արթնանալ, նա ամեն մեկին կան- չում եր իր անունով: Նա նրանց ճանաչում եր ձայ- ներից, գուշակում եր, թե նրանցից վերն ավելի շուտ կարթնանա, ինչպես կերգի: Յերեխաներին յերկար պատմում եր հեքյաթներ, վոր հենց տեղն ու տեղն անպատրաստից ստեղծագործում եր: Այդ հեքյաթ- ներից մեկը ամենամեծ տպավորությունը թողեց: Նրա անուններ «Ինքնագետ»: Դա մի պարծենկոտ տղայի մասին եր, վորը կարծում եր, թե ինքն ամեն ինչ ուրիշներից լավ գիտե:

Աշնանը Փարիզում, Սպասսկոյեյում անցկաց- յած ամառը նրան թվում ե «ինչ վոր անբնա- հաճելի յերաղ»: Հետևյալ ամառը նա յերազում ե վերահորոգել այն: Սակայն, 1882 թվի գարնանը նրա մոտ յերևում են ինչ վոր տարորինակ հիվանդությունն առաջին նշանները. «նույնիսկ հասարակ քայլերու կամ կանգներու ժամանակ նա ուսերում, մեջքի թիակ- ներում և ամբողջ կրծքում ուժեղ ցավեր եր զգում»: Պետք եր «պառկել կամ հանգիստ նստել»: Հիվանդու- թյունը համառում եր: Շուտով Ռուսաստան գնալու հույսերը խորտակվեցին:

Նրա լուրջ հիվանդության լուրը Ռուսաստանում

չերմ ցավակցուհյան արձագանքներ առաջ բերեց: Նրա հիվանդության առաջին լուրն առնելուն պես և և Տու- ստոյը, վորի հարաբերությունները Տուրգենևի հետ իրենց չերեսուն տարվա ծանոթություն ընթացքում ամենևին ել հարթ չեյին, զրուս ե նրան մի հուզված նամակ. «Յերը չես հավատացի, վոր դա լուրջ հիվան- դություն ե, յես զգացի. թե ինչպես եմ յես ձեզ սի- րում: Յես զգացի, վոր յեթե դուք մեռնեք ինձանից ա- ռաջ, ինձ մեծ ցավ կպատճառեք: Գուցե դեռ ևս այդ բոլորը կասկածամտություն ե և բժիշկների հերյու- րանք... Գրկում եմ ձեզ — իմ հին, սիրելի և ինձ հա- մար շատ թանկագին մարդ և բարեկամ»:

Բայց բժիշկները չսխալվեցին: Հիվանդությունը, վոր վողնաշարի վոսկորների ճակատագրական վնաս- վածք դուրս չեկավ, առաջադիմում եր:

1883 թ. գարնան մոտ հիվանդությունը խիստ սրվեց: «Աներևակալելի տանջալից հիվանդության և աներևակայելի ուժեղ որգանիզմի» մեջ յեղած պայ- քարում հաղթանակում եր հիվանդությունը: Հիվան- դը սոսկալի, վոչ մարդկային տանջանքներ եր զգում: Թեթևության ժամերին նա ասում եր, վոր յեթե վե- րագառնա գրական գործունեությունը, կնկարագրի լեյազարություն հասցնող ֆիզիկական տանջանքներ: «Յես ծովի հատակումն ելի և տեսա հրեշներ և այ- լանդակ որգանիզմների կապակցումը, վորոնք վոչ վոք չի նկարագրել, վորովհետև այդպիսի ներկայացումնե- րից հետո վոչ վոք հարուստ չի առել»: Մայիսին նրան փոխադրեցին Բուժիվալ, Փարիզից վոչ հեռու, վորտեղ դեռ ևս յոթամասունական թվականների կեսե- րին վիրադոսներն ու Տուրգենևը, գեղեցիկ պարկի մեջ,

իրենց համար ամսուանոցներ եյին շինել: Ոգոստոսի կեսին նա ստաց իրեն այցելութեան յեկած Մուսասանին. «Տվեք ինձ ատրճանակ, նրանք ինձ ատրճանակ տալ չեն ուզում, յիթե դուք ինձ ատրճանակ տաք, դուք իմ քարեկամը կլինեք...»

Իրանից մի քանի ուր հետո, հին տոմարով ոգոստոսի 22-ին, նա վախճանվեց:

Մի ամիս հետո գնացքը Տուրգենևի մարմինը տանում եր Պետերբուրգ թաղելու համար: Այդ գընացքը Պետերբուրգի իշխանություններին մեծ հոգս եր պատճառում: Ներքին գործոց մինիստրությունից նահանգապետներին և ժանդարմական վարչությունների պետերին հեռագրեր եյին թուղում: Վոստրիկանության գլխավոր վարչությունը հեռագրով հրամայում եր. «Առանց հրապարակման, հատուկ զգուշացումով միջոցներ ձեռք առնել, վորպեսզի հանդիսավոր դիմավորություններ չարվեն»: Քաղաքների մոտով դագաղը դիտմամբ գիշերով ելին անցկացնում, ճանապարհին պահում եյին, կայարաններում արգելում եյին հայտարարել դիակն անցկացնելու ժամը: Այնպիսի միջոցներ եյին ձեռք առնվում, վոր դիակն ուղեկցող Մ. Մ. Ստասյուլևիչը բացականում եր. «Կարելի չե կարծեր, թե յես Սոլովյե-ավաղակի դիակն եմ տանում»: Յարական կառավարությունը վոչ միայն կենդանի գրողներից եր վախենում, այլ և մեռածներից: Լրագրերին ուղարկված եր գաղտնի շրջաբերական, վորով առաջարկվում եր «բոլորովին վոչինչ չհաղորդել Տուրգենևի թաղման առթիվ ձեռք առնված վոստրիկանական կարգադրությունների մասին»: Կառավարությունն ուզում եր, վոր նրա մահը

վորքան կարելի յե ավելի աննկատելի անցներ: Կրկնվեց այն, ինչ վոր դրանից յերեսուն-տարի առաջ կատարվում եր Գոգոլի մահվանից հետո:

Սակայն Պետերբուրգում հանդիսավոր դիմավորությանը խանգարել չեր կարելի: Հագարավոր մարդիկ, խիստ կարգապահությամբ, հետևում եյին դագաղին: Հուղարկավորությունը ձգվել եր մի քանի վերստ: Փողոցներից մեկի անկյունում, ձիու վրա հեծած, հուղարկավորությանը հետևում եր ինքը՝ քաղաքապետը, գեներալ Գրեսսերը, վորը դրանից մի փոքր առաջ բողոքարկել եր քաղաքային դումայի վորոշումը Տուրգենևին Պետերբուրգ քաղաքի հաշվին թաղելու մասին: Սպառնալից հայացքով աչք ածելով անցնողներին, նա կազնած մնաց մինչև ամբողջ հուղարկավորությունն անցավ իր մոտով: Նա ստիպված չեղավ իր մոտով բաց թողնելու դագաղի հետևից գնացող հարյուր յոթանասուն վեց պատգամավորություն: Յեվ այդ հսկայական բազմությամբ մարդկանց մեջ բաժանվում եր Պ. Յա. Յակուբովիչի գրած անլեգալ թուղեցիկը:

«... (Լիրերալները) հրապարակել են Ի. Ս. Տուրգենևի ինչպես բանավոր, այնպես ել գրավոր կարծիքները ուսական հեղափոխության մասին, վորին նա իբր թե չեր հավատում և վորին չեր ծառայում: Բայց մենք չենք ել պնդում, թե նա հավատում եր: Վոչ, նա կասկածում եր նրա մոտիկությանը և կառավարության հետ հերոսական կովի բռնվելու միջոցով նրա իրականացմանը, մի գուցե նա այդ նույնիսկ չեր ել ցանկանում և անկեղծ աստիճանապաշտ

եր — դա մեզ համար միևնույնն է: Մեզ համար կարե-
վորն այն է, վոր նա ծառայում էր ռուսական հեղա-
փոխութեանը իր գրվածքների սրտի իմաստով, վոր
սիրում էր հեղափոխական յերխտասարդութեանը, հա-
մարում էր նրան սուրբ և անձնազոհ...»



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կալվածատիրուհու առավոտը	5
Հին հուշատետր	7
Ծեծի յեվ խոսանգումների սեղ	8
Ի՞նչ է նշանակում «Ֆուճիկա» բառը	11
«Յուրի Միլոսլավսկի»	14
Մոսկվայի համալսարանում	16
Պետերբուրգում	17
Առաջին փորձեր	20

~~ՄԱՍՆ ՅԵՐՐՈՒՄ~~

Հրեզն	23
Ճանապարհորդություն	29
Բերլին	35
1840 թիվ	43

ՄԱՍՆ ՅԵՐՐՈՒՄ

Բելիցսկի	51
Վերադարձ	59
Գոգոլի մահը	62
Կալանի սակ	65
Ախորում	68
Ղրիմի կամպանիան	72

ՄԱՍՆ ԶԱՄԱՆՔԻ


Ռեժիսորից առաջ	77
Բաղեն — Բաղեն	84
Վերջին տարիներ	93

Դ. Մ. ՏՈՒՐԳԵՆՆԵՎԻ ՅԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ՝ ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ

1. «Հաղթական սիրո յերգը», թարգմ. Մարիամ Մատինյան, Թիֆլիս, 1892:
2. «Արձակ բանաստեղծություններ», թարգմ. Ալեքսանդր Մատուրյան, Մոսկվա, 1895:
3. «Արձակ բանաստեղծություններ», թարգմ. Ալեքսանդր Մատուրյան, Բազու 1902:
Այս փոքրիկ ժողովածուն, Վոբլի մեջ միայն 6 արձակ բանաստեղծություն է մտել, ներկայացնում է առաջինի կրճատ հրատարակությունը:
4. «Որամուտին»,
5. «Հայերը և զավակները»: թարգմ. Մուշե վարդապետ, Թիֆլիս, 1904:
6. «Գարնանային ջրեր» թարգմ. Լ. Դանիելյանի, Թիֆլիս, 1912:
7. «Մումու», պատմվածք ճորտատիրական շրջանից՝ թարգմ. Ստ. Զորյան, Յերեվան, 1924:
8. «Պատմվածքներ», առաջին հատոր, թարգմ. Ստ. Զորյան, Յերեվան, 1931:
9. «Բուրմիսորը», թարգմ. Հ. Բողդանյան, Ա. Մ. Լիսինի քննադատական — կենսագրական ոչ հերկով. Ռուստով — Դոն, 1935:
10. «Լորիկ», թարգմ. Հ. Տեր Ավադյան, Յերևան, 1937 թ.

Գլավլիտի լիազոր. Խ — 9245 Հրատ № 4203
Գատվեր 1045. Տիրաժ 3000.
Թուղթ 72 × 110 Տպագրական 31/4 մամուլ.
Մեկ տպագրական մամուլում 51.200 նիշ.
Հեղինակային 4 մամուլ.

Գեոհրատի տպարան. Յերևան, 1937 թ.



« Ազգային գրադարան



NL0316806

